

# ԱՍՈՅԹՆԵՐ ԱՐԻՒՏԱՏԻ ՄԱՍԻՆ

(Ծննդեան 125-ամեակի առթիւ)

Աւետիք Իսահակեան

Մարդ ամէն բանի մէջ գեղեցիկն է որոնում, եւ գեղեցիկն է գտնում. ամէն բանի մէջ գեղեցկութիւն. վերջի-վերջոյ գեղեցիկն է լինելու մեր կրօնը: Գեղեցիկ մարդ, գեղեցիկ կեանք, գեղեցիկ կրօն, գեղեցիկ բարոյականութիւն, գեղեցիկ հասարակական կազմ...

Եթէ մի բարոյականութիւն գեղեցիկ չէ, նա բարոյական չէ:

Եթէ մի երեսոյթ, մի վարմունք գեղեցիկ չէ, նա բարոյական չէ...

Պէտք է ապրել գեղեցիկ, մտածել, զգալ գեղեցիկ. հագնել, գնալ գեղեցիկ, ուտել, խմել, քնել գեղեցիկ, մեռնել գեղեցիկ... Ամէն բան գեղեցիկ, գեղեցիկ...

Ճշմարտութիւնը եթէ գեղեցիկ չէ, նա ճշմարտութիւն չէ, իսկ ինչ որ գեղեցիկ է՝ նա ճշմարտ է:

Գեղեցկութիւնը կատարելութիւն է եւ ընդհակառակը:

\*\*\*

Արեստը պիտի արտայայտէ արեստագետի հոգին, իրերի հոգին, մարդու հոգին: Նա պիտի մեկնաբանէ պատկերներով՝ մեր աշխարհը: Նա պիտի թարգմանէ բնութիւնը:

Նա պէտք է տայ ո՛չ թէ իրականութիւնը, այլ նրա զգայութիւնը, զգացումը եւ պատրանքը:

Ո՛չ թէ, օրինակ, նկարի մէջ երկաթուղու արագութիւնը տայ, կամ հողմի, կամ գետի, այլ նրա զգայութիւնը, այսինքն՝ զգանք մենք արագութիւնը:

Պատրանք եւ իրականութիւն: Արեստը իրականութեան պատրանքն է: Օրինակ, Օթելլօն Շեքսպիրի. մենք իլիզաբեթի միջոցով գտնու ենք եւ տեսնում իրականութիւնը՝ մարդու հոգին, նախանձ, վրէժ, յուսահատութիւն, կրքեր:

\*\*\*

Մարդն է բնութեան իմաստը, եւ գեղեցիկն է ճշմարտութեան թագը, կատարը:

\*\*\*

Գեղեցկութիւնը Պլատոնի իդէալների թագուհին է:

\*\*\*

Գեղեցկութիւնը, գեղարեստը ինքնանոտագութիւն է բերում, մոռացութեան պահեր, երջանկացնում է:

\*\*\*

Գեղարեստն է՝ բնութիւնը գումարած մարդը:

Մարդը եւ բնութիւնը-միասին: Բնութիւնը, առանձն մարդը:

\*\*\*

Բնութիւնը խորհուրդ է, արեստը՝ մեկնիչ, մեկնաբան (արեստագետը, բանաստեղծը):

\*\*\*

Արեստն աւելի ճշմարտ է, քան իրականութիւնը, որովհետեւ նա ստեղծած է բանաստեղծի հոգու մէջ:

\*\*\*

Գեղարեստը մեր ներաշխարհի կատարելութիւնների դրսեւորումն է:

Բանաստեղծը, արեստագետը իր սրտի աչքով կը տեսնէ ու կը ըզգայ աշխարհի իրերը, երեսոյթները, երեսոյթների հոգին, ներքին, յաւերժական անփոփոխ կեանքը:

\*\*\*

Պիտի խմած լինես ամբողջ կուլտուրան, որ արեստագետ լինես:

\*\*\*

Անճանկան վշտի եւ հրճանքի միջոցով ներկայացնել հաւաքականը՝ ահա արեստը:

\*\*\*

Ամէն դար իր արեստն ունի, դարի հետ կապած:

\*\*\*

Արեստը կրօնի պէս բան է. նա ընդունակ է մոռացնել տալու կեանքը եւ յաղթելու մահը. միայն պիտի նրան սիրես ու նիւրես:

\*\*\*

Եթէ չլինէր արեստագետի աչքը, մարդիկ շատ բան չէին կարող տեսնել, կամ տեսած լինել:

\*\*\*

Գեղեցկութիւնը պէտք չէ վերլուծել, տարրալուծել, պէտք է ամբողջի մէջ առնել, որովհետեւ ամբողջն է գեղեցիկ. մանրամասները դաւաճանում են:

\*\*\*

Արեստի հոգին անկեղծութիւնն է:

\*\*\*

Իդճը, երեսակայութիւնը, պոեզիան, արեստը, գեղեցկացնում են չոր, մերկ, դաժան իրականութիւնը՝ դիակը, գերեզմանը, մահը: Ոսկեզօծում են, զարդարում:

\*\*\*

Խելացի են ֆրանսիացի գրողները, նկարիչները, բայց նրանց պակասում է զգացականը, կիրքը, տարերայինը, նախնական միջոց՝ matiere le premiere բնագրականը, այն, որ ունեն հին իտալացիք՝ մարմնի, արիւնի յուզական թափը, ուժը, ուժգնութիւնը: Մշակոյթ ունեն, գաղափարներ, մտածումներ, զարգացած են, դրանով կարելի է բացատրել matiere le primirer-ի պակասը:

\*\*\*

Մարդն այնքան մեծ է, որքան մեծ են նրա երագները: Արեստը երագի իրականացումն է: Իրականութիւնը անցնող կեանքն է. արեստն է յաւերժականը, ճշմարտը:

\*\*\*

Ամէն մի ստեղծագործութիւն անհատական կնիք ունի. անհատն է, որ մեն-մենակ ստեղծում է, գրում, նկարում, քանդակում, հնարում: Դրա համար էլ երեսայ ստեղծելը երկու հայրով չի լինի, այլ՝ մի. երկու հայրով, ինչպէս եւ երկու հեղինակով ստեղծումները, վիժում են:


\*\*\*

Գեղարեստը (նկար, մուզիկ, շէնք, արձան) մարդկային մտքի, զգացումի իրականացած ձեւն է: Ինչպէս որ էներգիան միջ է դառնում, այնպէս էլ նա, մեր հոգին, միջ է դառնում, առարկայանում, իր դառնում, իրանում:

\*\*\*

Ո՛չ մի բան այնպէս չի նպաստում արեստին, ինչքան հանգստութիւնը: Հանգիստ, անդորր, խաղաղ, անվրդով:

\*\*\*



# Իսահակեանական

Մենք պիտի երոպանանք, բայց Արեւելքի ոգով, բայց Արեւելքի արեւը մեր հոգում:

\*\*\*

... Անշուշտ, մեքենան պիտի ազդէ արւեստի վրայ՝ ճարտարապետութեան, մուզիկայի, նկարչութեան, արձանագործութեան, գեղարւեստի, գրականութեան վրայ, ինչպէս ազդում է պէլլաժը, ֆլորան, ֆաունան, կլիման...

\*\*\*

Չկայ արւեստ առանց արհեստի եւ չկայ հանճար առանց աշխատանքի, աշխատասիրութեան, ջանքի:

\*\*\*

Արհեստը յաճախ դառնում է արւեստ՝ յախտեմանկան արժէքներով, ամէն տեղ եւ ամէն ժամանակ գնահատած, գեղեցիկ, յուզիչ:

\*\*\*

Գորզը (խալին) ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ դաշտերի, ծաղկած մարգերի պատկերը, վերարտադրութիւնը:

\*\*\*

Մենք գիտութիւնից պահանջում ենք ճշմարիտը. նա տալիս է մեզ միայն ճշմարիտի պատրանքը: Հէնց մարդուն էլ այս է պէտք գիտութիւնից, ինչպէս եւ արւեստից:

\*\*\*

Արւեստը ժողովրդական արւեստի վսեմացումն է:

Գրական լիրիկան- ժողովրդական երգի վսեմացումն է: Այդպէս է եւ երաժշտութեան, նկարչութեան, պարի, ճարտարապետութեան մէջ:

\*\*\*

Ասում են, թէ արւեստը հայրենիք չունի: Այս ճշմարիտ է, սակայն ամէն հայրենիք իր արւեստն ունի. ամէն մի ժողովուրդ իր սեփական, ուրոյն արւեստը: Հայ ժողովուրդն ունի իր ուրոյն արւեստը՝ գրականութիւն, նկարչութիւն, երգ, ճարտարապետութիւն, բազմադարեան եւ մեծ արժէքներ, եւ իր պատուաւոր տեղը հին եւ նոր ժողովուրդների արւեստների մէջ:

\*\*\*

Գեղարւեստ, բանաստեղծութիւն, ամէն հոգեկան ստեղծագործութիւն գուտ ազգային են, ինչպէս որ անհատական են. միայն հայը կարող էր ստեղծել այս տեսակ Մայր տաճար (Անի), դա հայի ոգին է՝ մարմին առած, ձեւ ու ոճ ստացած, այդ կերպ եւ ոչ ուրիշ կերպ: Մեռած քարը հայն այլ կերպ է կենդանացնում, յոյնը՝ այլ, ռուսը՝ այլ:

Գեղարւեստը ազգի հոգու դրսեւորումն է. մի՛ քանդէք, մի՛ ոչնչացրէք այդ. դա ամենամեծ ոճիրն է արեւի տակ՝ սպանել մի ազգի ոգին. թողէ՛ք նա իր ոճով հասկանայ աստղերի երգը, եւ դրանով է, որ մարդկութիւնը կը հարըստանայ եւ աշխարհը կը դառնայ իսկական գեղարւեստի քանդարան...

\*\*\*

Արարատի ստերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգերով ու ճարտարապետութեամբ պերճախօս կերպով ցոյց է տալիս աշխարհին, որ ինքը դէմք ունի, իր ձեւը ունի, իր սեփական- անհատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհի, նրա իրերի եւ նրա խորհուրդների: Ի՞նչ կայ անկի բարձր, քան մի ազգի մշակոյթը, նրա հոգու դրսեւորումը:

\*\*\*

Մի ազգի ոճը, երգը, արւեստը, նրա կրօնը, հաւատալիքները, սովորոյթները, ասանդութիւնները, պատմութիւնը, լեզուն, խօսքը- բոլորը միասին կազմում են մի երկիր, նրա հողն ու ջուրը՝ ոճաւորում են, իմաստաւորում, բանա-

կան դարձնում, ոսկի մշուշով, ոսկեգօծ շղարշով պատում, աղամանդեայ փոշիներով ցոլացնում, դարձնում այդ երկիրը հայրենիք, նւիրական, սիրելի, ըզճայլի, նրա համար, մեռնելը՝ քաղցր, վեհ, անմահութիւն:

Ճանաչել մի ժողովրդի պատմութիւնը, հայրենիքը, նրա արւեստը, երգը՝ կը նշանակէ տեսնել, շօշափել նրա հոգին, եւ երբ տեսար եւ ճանաչեցիր, անպատճառ կը սիրես նրան, նրա հոգին ու սիրաը:

\*\*\*

Արւեստը ինքը ազգութիւնն է, ազգն է. տարբեր ազգեր՝ տարբեր արւեստներ. տարբեր արւեստներ՝ տարբեր ազգեր:

\*\*\*

Ասում են, թէ արւեստի գլուխ- գործոցները ազդում են ինչպէս բնութեան ուժը: Եւ ճշմարիտ է, որ արւեստի մեծ ուժերը ունեն այն շարժողութիւնը, որ մեզ բարձրացնում են: Արւեստի մեծ ուժերը մեր մէջ լռեցնում են մեր ժամանակատր անհատականութեան շաղակրատանքը, նրա վրայ իշխելով. նրանք մեր մէջ գաղթեցնում են մեր փոքրութեան, չնչիմութեան զգայնութիւնը, եւ այսպիսով առժամանակ ազատում են մեր ուսերը ծանր բեռից:

\*\*\*

Երբ մենք իջնում ենք լեռներից, մենք մի վայրկեան լաւ ենք լինում. այսպէս ենք զգում գլուխ- գործոցների յաճախելուց յետոյ. նրանք մեզ հեռացնում են մեզնից: Արւեստի էութիւնը պիտի լինի՝ մեզ բարձրացնել, վսեմիւն տանի:

\*\*\*

Խառը ոճը (թէ՛ նկարչութեան, թէ՛ ճարտարապետութեան, թէ՛ գրականութեան մէջ) նման է բորբոքած, հիւսնող ուղեղի զառանցանքի, կամ տեղոյալին, երեսակայութեան ու տեսիլների:

Օրինակ՝ հրէշային պատկերներ, կարմիր ու ոսկի ծովեր, ոսկի կապարներ՝ օձեղէն գլխով, կինը՝ հրէշային գլուխներով, երկա՛ր-երկա՛ր ոտքեր, ձեռքեր, մեծ, հրեղէն բազմաթիւ աչքեր՝ մի գլխի վրայ: ■

## Նորամուտների գալուստը բարի

«Լոյս» երկշաբաթաբերորը շնորհաւորում է ներքոյիշեալ նորածինների ծնունդը:



**Սեւան Սուֆասեան**  
մայրը՝ Քրիստինէ  
հայրը՝ Հարմիկ

**Եւիլիա Յարութեան**  
մայրը՝ Անահիտ  
հայրը՝ Ալբերթ

**Արուսիս Ալազեան**  
մայրը՝ Անահիտ  
հայրը՝ Վահիկ

**Փիւնիկ Մահմուդեան**  
մայրը՝ Վալենթին  
հայրը՝ Հովիկ

**Միո Նազարեան**  
մայրը՝ Թայիկ  
հայրը՝ Աւօ



Էձօ՞ն ԿՅ ՆՅ ՍԾՅ ՍՅ ՍՅՆ

Յոյս ունենք սպազայի նկատմամբ, բայց մտահոգւած ենք... Մեպտեմբերի 14-ին իրանահայ ճարտարապետների միութեան կողմից կազմակերպւած դաշտահանդէտում, մեր թղթակիցը հետեւեալ հարցերով դիմեց մասնակիցներին: ա- Արդեօք յայտ՞ով էք տրամադրւած մեր իրանահայ համայնքի ապագայի մասին թ՞է ոչ: բ- Ի՞նչ սպասելիքներ ունէք մօտ ապագայում ընտրելիք 12-րդ Պատգամաւորական Ժողովից: գ- Ի՞նչ կարծիք ունէք «Լոյս» երկշաբաթաթերթի մասին:

Նրանց 80 տոկոսը յոյսով էին տրամադրւած մեր իրանահայ համայնքի ապագայի նկատմամբ, 10 տոկոսն էլ թերահաւատ եւ մտահոգ ապագայով:

Յուսահատւած էին 12-րդ Պատգամաւորական Ժողովի կապակցութեամբ: Նրանք սպասում են, որ այդ ժողովը զբաղի համայնքի չլուծւած հարցերով, իսկ 10 տոկոսը որեւէ կարծիք չուներ:

«Լոյս» երկշաբաթաթերթի վերաբերեալ, նրանց 55 տոկոսը լաւատեղեակ էր թերթի բովանդակութեան եւ գտնում էր, որ ունի նոր մօտեցումներ եւ դրական էր համարում նրա որդեգրած անկուսակցական ուղին: 35 տոկոսը անծանօթ էր թերթի բովանդակութեան եւ 10 տոկոսն էլ որեւէ տեսակէտ չուներ նրա մասին:

Հանդիպումները շարունակուում են.- Այս օրերին էլ շարունակուում են Պատգամաւորական Ժողովի ընտրութիւններին կապւած ժողովրդական հանդիպումները տարբեր մարզանշակութային միութիւններում, որոնք կազմակերպուում են ԸԿ ենթա-յանձնախմբերի կողմից: Նմանատիպ հանդիպումներ եղել են Նարմաք եւ Մաջղիէ թաղամասերում, Չարմահալ եւ Հայ Համալսարանականների ընդհանուր միութիւններում: Հանդիպումների ընթացքում բացատրութիւններ է տրւել թեմի հասկացողութեան, Պատգամաւորական Ժողովի դերի եւ կարեւորութեան մասին: Աշխատանք է տարւել, որպէսզի ժողովուրդը ամբողջութեամբ մասնակցի ընտրութիւններին: Կրկին շօշուփուել է համամասնական եւ մեծամասնականի ընտրածների հար-

ցը, քննադատել է ոմանց մօտ գոյութիւն ունեցող անտարբերութիւնը եւ մի շարք ուրիշ հարցեր: Մինչ այժմ դեռ որեւէ զեկոյց Պատգամաւորական Ժողովի աշխատանքների մասին չի ներկայացուել:

Սուգաննա եւ Սիրիշօ Մարգարեաններն երգում են ԲաՖՖի ՄՄ Համալիրում.-

ԲաՖՖի Մ.Մ. Համալիրի կազմակերպութեամբ ՀՀ հանրայայտ երգիչ՝ Սուգաննա եւ նրա դուստր Սիրիշօն ելոյթ ունեցան նոյն համալիրում: Նրանք առաջին անգամ է, որ ժամանում են Թեհրան:



Թեկնածուները ընտրապայքար են տանում համայնքում.- 12-րդ ՊԺ-ի ընտրութիւնների համար գրանցուած թեկնածուները սկսել են իրենց քարոզչական արշաւը: Չնայած անհասարակ պայմանների եւ հնարաւորութիւնների, բոլորը օգտագործում են իրենց վաստակած հեղինակութիւնը՝ ընտրութիւններում յաղթելու համար: Մանրամասնութիւնները կը ներկայացնենք ապագայում, երբ ասարտւած կը լինեն աշխատանքները եւ կը յայտարարուեն պատգամաւորների ցանկը:

Նշեց ՀՀ Անկախութեան օրը.-

Մոյն քաղաքի հոկտեմբերի 2-ին Հայոց Ակումբի սրահում նշեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տարեդարձը՝ ՀՀ դեսպանատան միջոցով: Հրաւիրւած էին տարբեր երկրների պետական, պաշտօնական այրեր, համայնքի տարբեր ազգային-հասարակական կազմակերպութիւնների ու մատնամուլի ներկայացուցիչներ:

Նարմաք թաղամասի 28 թեկնածուներից, մերժել են 5-ը.- 12-րդ Պատգամաւորական Ժողովի ընտրութիւններին մասնակցող Նարմաք թաղամասի 5 թեկնածուների դիմումները մերժել են Ը.Կ.Յ.-ի կողմից: Ըստ ենթալանձնախմբի՝ նրանք

մերժել են հետեւեալ պատճառներով:

ա- Ուշացումով են ներկայացրել պահանջուած փաստաթղթերը:

բ- Ներկայացրած փաստաթղթերը անբաւարար են:

գ- Նրանց կողմից ներկայացրած հասցէները չեն համապատասխանում Ծխական Տարբի միջոցով գրանցուած հասցէների հետ:

Հարկ է նշել, որ վերոյիշեալ պատճառներով մերժուածների ցանկում նկատուում են համայնքի բարձր արժէք եւ գիտելիքների տէր մարդիկ, օրինակ՝ տնտեսագէտ եւ դոկտոր:

Ի.Ա.Մ.Մ.-ի սկսուած թաժիկը տօնեց իր հիմնադրման 20-րդ տարին.-

Մոյն քաղաքի 29-ին Իրանահայ Ազգային եւ Մշակութային միութեան սկսուած թաժիկը տօնեց իր հիմնադրման 20-րդ տարին: Նախ ելոյթ ունեցան վերոյիշեալ միութեան նախագահ՝ պրն. Արմաւիր Մարգարեանը եւ սկսուած թաժիկի ընդհանուր պատասխանատուն: Այնուհետեւ եղան Ֆիզիքական վարժութիւնների ցուցադրում եւ մշակութային ելոյթներ:

Հրաւիրւած էին Թեհրանի հայկական տարբեր միութիւնների՝ սկսուած թաժիկների պատասխանատուներ: Հրաւիրուածների շարքում էր, ՀՀ սկսուած թաժիկի (Հայկազունների) կազմակերպութեան ներկայացուցիչը Իրանում՝ պրն. Վահիկ Նայիրեանը:

Էձօ՞ն ԿՅ

Օրական 5 տոննա «կապար» է տարածում Թեհրանի օդի մէջ (Իրան օրաթերք 18.09.00).- Ըստ հաւաստի տեղալների՝ թեհրանի օդի անշարժ վիճակում բարձրացրել է թունատոր միւթերի քանակը:

150 հազար իրանցի բժիշկներ եւ ինջիններն են ապրում ՄՄՆ-ում (Հայաթէ Նօ օրաթերք 17.09.00).- Ըստ որոշ տեղալների ներկայումս վերոյիշեալ թույլ մասնագէտներ են ապրում Ամերիկայում:

ԾՅ Թ Յ ը Յ Կ

Սուրբ Յովհաննէս եկեղեցու քահանայ Տէր Նարեկը, Հայաստանը Երոյխորհրդին անդամակցելու յարն ընդունել է կսկիծով եւ տազմասպով (Ազգ օրաթերք 27.07.00).- Աղանդաւորութիւնը Սիսիանի շրջանում մուտք է գործել 30-ական թթ. սկզբին: Մարդոտութեամբ եւ հոգեւորութեամբ ակտիւ աշխատանքներ ծաւալեցին շաբաթականներն ու հոգեգալստականները: Վերջերս Սիսիան անխուսժեցին սատանայի ամենամեծ ծառաները՝ «Եհովայի վկաներ» չար աղանդի ներկայացուցիչները: Տէր Նարեկը թողել է քրիստոնէական քարոզչութիւնը եւ զբաղուած է աղանդաւորների դէմ հակաքարոզչութեամբ:

Նրա համոզմամբ, դրսի ուժերին ձեռնտու չէ Հայաստանի, հայերի միաւորումը, իսկ կրօնն այն ուժն է, որ ազգն միասնական է պահում: Նըրանց Ֆինանսաւորում են դրսից: Նա ասում է, որ «Հայաստանը դառնում է ԵՆ-ի անդամ, եւ ԵՆ-ն իր օրէնքները փաթաթում է մեր վզին: ԵՆ-ն փորձում է մեզ համոզել, որ համասեռամոլութիւնը աննորմալ երեւոյթ չէ: Մա մեր թշնամու սարքած բանն է, թշնամու ցանած սերմերն են մեր պարարտ սրտի մէջ»:

Աղանդները Հայաստանում (Ազգ. Հեռու. 10.09.00).- Տարբեր դարերում տարբեր հասկացողութիւն է ունեցել աղանդաւորականը, մեր ժամանակներում աղանդը ուրիշ հասկացողութիւն ունի, եկեղեցուց շեղուած կամ տարածայնութիւններ ունեցող համայնքներն են: Հայաստանում գրանցուած է 48 կրօնական կազմակերպութիւններ, բայց դա չի նշանակում, որ նոյնքան գործող աղանդ կայ: Իրականում նրանք ներկայացնում են 13 ուղղութիւն, մնացածը բարեգործական կազմակերպութիւններ են: Կրօնական ուղղութիւնների գործունէութիւնը համակարգելու համար, նորանկախ Հայաստանը ընդունեց խղճի ազատութեան եւ կրօնական կազմակերպութիւնների մասին օրէնքը, ըստ դրա՝ կրօնական համայնքը կարող է հանդէս գալ որպէս իրաւաբանական անձ ու ձեռք բերել հաւաքներ անցկացնելու իրա-

ւունքը միայն գրանցելու դէպքում: Կան կազմակերպութիւններ, որ չեն ուզում գրանցուել, մտածելով, որ գրանցումը իրենց հաւատքին դէմ է, իրենք գրանցուած են միայն Աստծու մօտ: Եհովայի վկաները գրանցուած չեն եւ չունեն գործելու օրինական իրաւունք:

Սիրիայում՝ հայկական մշակութային օրեր (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 02.09.00).- Հայաստանի եւ Սիրիայի միջեւ կազմուել է համագործակցութեան ծրագիր՝ առաջիկայ երկու տարիների համար, իսկ արդէն այս աշնանը Սիրիայում կը կազմակերպուեն հայկական մշակոյթի օրեր:

3000 երեխաներ վայելեցին ամառային հանգիստը (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 02.09.00).- Այս ամառ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որոշմամբ Հայաստանի ութ ճամբար-

ներում, նախատեսուած 1500-ի փոխարէն, ամվճար հանգստացան 3000 երեխաներ: Չոհած ազատամարտիկների, ծնողազուրկ, բազմազաւակ եւ սակաւ ապահովուած ընտանիքների զաւակները երկու հերթով, իրաքանջիւրը՝ 20 օրով ամառային հանգիստն անցկացրին Հանքաւանում, Ծաղկաձորում եւ Սեւանի ափին:

ՃԷԵ շ 1/4 1 2 ՍԱԵՍ

Թուրքիայում կիրառուում է մարդու նկատմամբ տանջանքի տարբեր եղանակներ (Հայաթ Եւ 17.09.00).- Ըստ գերմանական մի օրաթերքի, չնայած որոշ առաջխաղացումներ է նկատուում Թուրքիայում մարդու իրաւունքների հարցի կապակցութեամբ, այնուամենայնիւ մարդու նկատմամբ տանջանքի տարբեր տեսակների կիրառելը, այդ երկրում սովորական բնոյթ է ստացել:

Երոմիութիւնը ելքեր է փնտռում վառելիքի ճգնաժամից դուրս գալու համար (Հայաթ Եւ օրաթերք 20.09.00).- Նրանց կողմից վառելիքի վարկերի յաւելումը՝ ցոյցերի ու

բողոքների պատճառ է դարձել: Ֆինլանդիայում բեռնատար մեքենաների վարորդները գործադուլ են յայտարարել, նոյն միջոցին են դիմել, ումանք մատչելիս պահպանիայում:

Մահացութիւններ՝ ցրտահարութեան հետեւանքով Անգլիայում (Հայաթ Եւ օրաթերք 21.09.00).- Աշխարհում ցրտահարութեան հետեւանքով տարիքաւորների մահացութեան ամենամեծ քանակը գրանցուել է Անգլիայում:

Նշի փոթորիկը տեղի է ունեցել (Հայաթ Եւ օրաթերք 16.09.00).- Յայտնաբերուել են առաջին փաստերը, որոնք ցոյց են տալիս, որ մարդիկ ապրել են այն շրջանում, որտեղ ներկայումս Սեւ Ծովի միջոցով ծածկուած է: Չեք են բերուել որոշ փայտային գործիքներ ու քարերի վրայ քանդակներ: Սրանք յայտնաբերուել են Սեւ Ծովի ափերից 18 կիլոմետր հեռաւորութեան վրայ, ջրի 100 մետր

À. Î. Û. Ü³ ÛáóĚÇ  
³ ëáóĚÇëĀ

խորութեան վրայ: ■

Սոյն թականի հոկտեմբերի 5-ին Թեհրանի Հայոց Ազգային Առաջնորդարանում տեղի ունեցաւ Ընտրական Կենտրոնական Յանձնախմբի մամուլի ասուլիսը:

Նախ Ը.Կ.Յ. Նախագահ՝ պրն. Թ. Թովմասեանը տեսլներ հաղորդեց Պատգամաւորական Ժողովի ընտրութիւններին մասնակցող թեկնածուների մասին: Ըստ այդ հաղորդման՝ վերջնական արդիւնքները հետեւեալն են:

ա- Նարմաթի ընտրական շրջանում դիմում են ներկայացրել 78 թեկնածուներ որոնցից վաւերացուել են 24-ը:

բ- Ս.Մարգիս եկեղեցու ընտրական շրջանում դիմում են ներկայացրել 30 թեկնածուներ, որոնցից վաւերացուել են 27-ը:

գ- Ս. Վարդանանց եկեղեցու ընտրական շրջանում դիմում են ներկայացրել 4 թեկնածուներ եւ բոլորն էլ վաւերացուել են:

ե- Ս. Աստուածածին եկեղեցու ընտրական շրջանում դիմում են ներկայացրել 5 թեկնածուներ և բոլորն էլ վաւերացել են:

զ- Մաջիդիէի ընտրական շրջանում՝ դիմում են ներկայացրել 17 թեկնածուներ, որոնցից 16-ը վաւերացել են:

է- Արաք քաղաքի ընտրական շրջանում դիմում են ներկայացրել 3 թեկնածուներ և բոլորն էլ վաւերացել են:

Ը. Կ. Յ. իր երախտագիտութիւնը յայտնեց, Իրանի ներքին գործերի նախարարութեանը՝ ցուցաբերած վերաբերմունքի, յատկացրած հնարաւորութիւնների և բարձր հովանաւորութեան համար:

Վերջում եղան հարցեր, որոնց Ը.Կ.Յ փորձեց պատասխանել: Դարձեալ շօշափուեց համամասնական և մեծամասնական ընտրական ձևերը:

- ՊԺ. ընտրութեան մէջ «մեծամասնական» ձեւը կիրառելը, զուգէ ձեռք է տալիս ոմանց և նրանք ցուցակագրում են իրենց ցանկացած մարդկանց և ժողովրդից պահանջում, որ միայն այդ ցանկից ընտրեն: Արդեօ՞ք դա մեր ժողովրդի շահին է: Մեր թրթակիցի այդ հարցի պատասխանը եղաւ հետեւեալը:

- Մենք այդ հարցին չեզօք մօտեցում ունենք և դա միութիւնների ու թեկնածուների հարցն է: Իսկ թէ առհասարակ արդիւնքը ին՞չ կը լինի, դա ապագայում կը տեսնենք: ■

## ՏԻՎՐՈՒՆԻ

¼ ' z Ôô² Ì àòÃ ° z Û  
 ì ÆÖ² Ì Æ  
 Ð² Û² èî z Û àòØ  
 (2000 Æ. Û³ ƆèÇ 1-Ç  
 ¹ ñáóÃ»³ Ûµ)

ՀՀ սոցիալական նախարարութեան աշխատանքի և գրադաժութեան հանրապետական ծառայութեան տեղւոյնքով 2000թ. մայիսի մէկի դրութեամբ տարածքային կենտրոններ դիմած աշխատանք փնտրող անձանց թիւը 208713 մարդ է: Նրանցից գործազուրկի կարգավիճակ ստացել է 86.5%-ը՝ 179971 մարդ: Նախորդ ամսւայ համեմատ գործազուրկների թիւը նազել է 1052-ով՝ պայմանաւորաժ ընտանեկան նրպաստի համակարգում ընդգրկելու համար գործազուրկի կարգավիճակ ունեցող անձին տրտող միատրների փոքրացմամբ: Այս փաստը մէկ անգամ եւս հաստատում է, որ գործազուրկների թիւ աճը արհեստական էր՝ կապաժ ընտանեկան նպաստի համակարգի ներդրման հետ: Գործազուրկների ընդհանուր թիւ 63.7%-ը կան 114606-ը կանայք են:

Գործազուրկութեան մակարդակը երկրում 11.8% է: Գործազուրկութեան մակարդակի նազման միտում է դիտում Շիրակում, Սիւնիքում, Արարատում (0.1%-ով), Վայոց Ձորում (0.3%-ով), Կոտայքում (1.3%-ով): Երեւանում գործազուրկութեան մա-

կարդակը նազել է 0.2%-ով (11.6%):

Գործազուրկութեան նպաստ ստանում է 25486 գործազուրկ, իսկ դրամական օգնութիւն՝ 24379 աշխատանք փնտրող քաղաքացի:

Ապրիլին գործատուների ներկայացրած թափուր աշխատատեղերի թիւը 766 էր, որից 584-ը՝ բանտրական: Յատկապէս մեծ է եղել վարորդների և կարող բանտրների պահանջարկը:

Տարեակրից աշխատանքի և գրադաժութեան կենտրոնների միջոցով աշխատանքի է տեղատրել 3233 մարդ, որից 1064-ը՝ Երեւանում: Տեղատրաժների ընդհանուր թիւ 48%-ը կանայք են:

Հաշտուտ ամսում կազմակերպել է մասնագիտական ուտուցման 9 դասընթաց, որոնցից 7-ը՝ Երեւանի, 2-ը՝ Արագաժտուրի մարզի գործազուրկների համար: Դասընթացներ (ընդգրկաժ է 145 գործազուրկ) կազմակերպել են ՀՀ առողջապահութեան և սոցիալական ապահովութեան նախարարութեան քազային ուտումնական կենտրոնում («Ինֆորմատիկա»ԳԱՄ-ում) հետեւեալ մասնագիտութիւններով. համակարգչային գործավարութիւն, համակարգչային ձեւատրում, համակարգչային հրատարակչութիւն, համակարգչային տեխնիկայի և գրասենեակային սարքատրումների նորոգում ու սպասարկում, դեկալարի օգնական, հաշտապահական հաշտաժում և փոքր ձեռներեցութեան կազմակերպում:

**ՀՀ առողջապահութեան ու սոցիալական ապահովութեան նախարարութեան աշխատանքի և գրադաժութեան հանրապետական ծառայութեան կրատական կենտրոն**

## Լոյս է տեսել և վաճառում է՝ Հայ-Իրանական մշակութային և հասարակական եռամսեայ «Ապագա» հանդէսը:



Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սզակիրներին:

- ◀ Թաղէտ Սանոյեան
- ◀ Բարդուղ Բարթոլեան
- ◀ Մահիչ Շիրինեան
- ◀ Դոկտ. Չաւէն
- Սուրաղխանեան
- ◀ Մաթենիկ Տէր
- Սարգսեան
- ◀ Գէորգ Օհանեան
- ◀ Ռուբիկ Բարխանի
- ◀ Ռաեա Տէր Պողոսեան
- ◀ Պետրոս Գէորգեան

# «Մեր ժողովրդի եւ պետութեան տօնն է»

Հարցազրոյց Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութեան պետական յանձնաժողովի փոխնախագահ Խոսրով Յարութիւնեանի հետ

Այս կապակցութեամբ տյն քականի սեպտեմբերի 10-ին Ազգային Հեռուստատեսութեամբ մի հարցազրոյցում բացատրութիւններ ներկայացրեց 1700-ամեակի տօնակատարութեան ծրագրերի նախապատրաստական յանձնախմբի փոխնախագահ՝ պրն. Խոսրով Յարութիւնեանը: «Նախ պէտք է ասեն, որ իրօք 2001 քականը ամբողջութեամբ կը նկրի Քրիստոնէութեան 1700-ամեակին, այսինքն Հայաստանում քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն հռչակման տարի: Համոզուած ենք, որ այս տարելիցի նշումը մի հիմնալի հնարաւորութիւն է մարդկութեանը եւ միջազգային հանրութեանը ներկայացնելու ոչ միայն մեր քրիստոնէութեան պատմական մշակութային ժառանգութիւնը, այլ նաեւ մեր ներկայով, ինչու չէ նաեւ մեր պատկերացումներով ապագայի նկատմամբ: Այդ իսկ պատճառով կարծում են, որ այս կարճատեւ ժամանակահատուածում մեր աշխատանքը նկրած կը լինի հնարաւորին չափով ապագայ տօնակատարութիւններին եւ նրանց միջոցով ճանաչողութիւն հաղորդելը: Այս ժամանակահատուածի հիմնական նպատակը սա է: Երկրորդը մենք ենթադրում ենք, որ 2001 քականը կը տարբերի նաեւ զբօսաշրջիկների այցելութեամբ եւ համոզուած են, որ նրանք միայն սփիւռքահայեր չեն լինի եւ ամենայնդէպս մեր նպատակն է, որ միայն սփիւռքահայերը չլինեն, հետեւաբար պէտք է այդ զբօսաշրջիկների համար անհրաժեշտ պայմանների ապահովում եւ կոթող-ների ու յուշարձանների բարեկարգում, յուշարձանների բոլոր կառուցածքների ապահովում, օդանաւակայանի բարելաւում եւ մի խօսքով այն ամենը ինչ-որ պէտք է որեւէ երկրի մշակութային, տարածելու եւ ծանօթացնելու էլ այն նախապատրաստական աշխատանքները, որոնք պէտք է տանենք:



Գործում է երկու յանձնաժողովներ՝ պետական եւ մայր Աթոռ Ս. Էջմիածնի յանձնաժողովը: Մենք այս փուլում աշխատում ենք համագործակցել, համակարգել եւ համատեղել: Ինտերնետում ունենք մէկ էջ 1700 ամեակին նկրած, բնական է, որ սա պաշտօնական, ամենալիարժէքն է տեղեկատուական առումով եւ համոզուած ենք, որ ամենահրատարակչի է: Օրէնքի շրջանակներում իւրաքանչիւր որ իրաւունք ունի ինտերնետից օգտուելու եւ հաւանաբար որոշները նկատուած կը լինեն, որ տարբեր անձիք բացել են 1700-ամեակին նկրած Web. Sit.-եր եւ ցաւօք սրտի երբեմն շատ աղաւաղուած ձեւեր կան, օրինակ վերջին Web. Sit.-երից մէկում արձանագրուած է, որ Հայաստանը քրիստոնէութիւնը ընդունել է 314 քականին, բայց դա էլ այնքան էական չեն համարում, որքան որ երբեմն Sit.-երի այդ հեղինակները եւ սեփականատէրերը այցելում են Ֆիրմաներ եւ մեր անունից օգտուելով, նաեւ իմ անունից օգտուելով՝ իբր թէ ես եմ նրանց ուղարկել եւ առաջարկում են Ֆիրմաները իրենց գովազդները տեղադրելն այդ էջերում: Ես ուզում եմ տեղեկացնել բոլորին,

որ պետական յանձնաժողովը Ս. Էջմիածնի յանձնաժողովի հետ միասին պաշտօնապէս յայտարարութիւն կանի, կը նշի այն էջը, հասցէն եւ անունունը, որտեղ գովազդ տեղադրելը անելի իմաստաւոր կը լինի:

Այս տօնակատարութեան հիմնական հասկացողութիւնը այն է, որ նշել ոչ թէ մէկ օր, այլ ողջ տարին՝ 2000 քականի դեկտեմբերի 31-ից մինչեւ 2001 քականի դեկտեմբերի 31-ը: Հիմա մշակուած է նաեւ ծրագրերը, կարծիք կայ, որ 2000 քականի դեկտեմբեր 31-ին եւ Հանրապետութեան նախագահը եւ վեհապետը Ս. Էջմիածնում հա-մատեղ հանդէս են գալու, հաւանաբար կը լինի պատգամ ուղղուած աշխարհի բոլոր ժողովրդներին, մեր պատկե-րացումները ապագայի՝ յատկապէս 21-րդ դարի հետ կապուած: Այսպէս ամբողջ տարւայ ընթացքում անց կը կացի ամենատարբեր միջոցառումներ, ընդ որում մի-ջոցառումների ճնշող մեծամասնութիւնը մասսայական են լինելու, որպէսզի մեր ազգաբնակչութիւնը եւ մեր հիւ-րերը իրենք դառնան այդ միջոցառումների մասնակից: Այդ միջոցառումների ընթացքում մենք օգտագործելու եւ ծանօթացնելու ենք մեր բոլոր յուշահամալիրները, կոթող-ները, Չարթնոցը, Էջմիածնը, Գառ-նին, Գեղարդը, մեր Երեսան քաղաքի լուսագոյն յուշահամալիրները եւ Հանրապետութեան ողջ տարածքը: Այսինքն մենք փորձելու ենք բոլոր միջոցա-

ռումների ընթացքում ողջ բնաշխարհի, բոլոր ճարտարապետական, հոգեւոր արժէքները ներկայացնել եւ ազգաբնակչութեանը եւ մեր հիւրերին, բայց միաժամանակ հաւանաբար տեղեկ էք, որ յունիսի 17-ը Ս. Էջմիածնի տօնն է եւ ԵՌԻՆԵՄԿՕ-ն այդ օրը ընդունել է, որպէս 1700-ամեակի տօնակատար-ութեան օր եւ յունիսի 17-ին նախատեսուած է միջոցա-ռում թէ Էջմիածնում եւ թէ ԵՌԻՆԵՄԿՕ-ի կենտրոնում:

Միջոցառումների մի շարան սկսել է վաղուց: Աշխարհին ներկայանալու համար միայն խօսքով եւ լեզուով հնա-բար չէ, բաւականին լուրջ հրատարակչական նիւթեր պէտք է դնենք շրջանառութեան մէջ, որ Հայաստանը ներ-կայացնի, մեր յուշարձանները ներկայացնի: Տուրիստա-կան յայտագրեր եւ քարտէզներ պէտք է պատրաստեն: Հիւրանոցները պէտք է պատրաստեն: Երեսան քաղաքը եւ մնացած քաղաքները գովազդներով, լուսատարութեամբ եւ լուսային ճարտարապետութեամբ պատրաստուած պէտք է լինեն այս 1700-ամեակի տօնակատարութեան համար: Ես համոզուած եմ, որ սարսափելի մեծ ծաւալում աշխատանք է մեզ սպասում: Ես ենթադրում եմ, որ 2001 քականը՝ զուցէ իմաստաւորելով մեր ողջ պատմական անցեալը, Առաքելական Եկեղեցու պատմական անց-եալը, կը մղի մեզ, մի քիչ բարիանալ, եւ դառնալ միմեանց նկատմամբ լար ջանկացող: Ես կարծում եմ, որ բոլոր այս միջոցառումները հնարաւորութիւն կը տան, որ մթն-լորտը փոխել եւ տրամադրուել դէպի ապագան: Բաւական է անցեալով ապրել, մենք պէտք է փորձենք պլանաւորել մեր ապագան եւ ապագայի նկատմամբ յոյսով տրամա-դրուել եւ մեզ եւ մեր գաւակներին: ■

# Թեմական

## Î º ÜàÛ² , ðàòÂÆôÛª Â °Ðð² ÜÆ Ð² Úàò Â °ØÆ

### 30ԴԻԱԾ 113

Ծնողա-ուսուցչական Խորհրդի կազմը բաղկանում է վերոյիշեալ ութ ծնողներից, ուսուցչական Խորհրդի կողմից ընտրած մեկ ուսուցիչից եւ դպրոցի տեսչից:

Ծանօթ ա- Սոյն կազմին անդամակցում է նաեւ Կրթական Խորհրդի ներկայացուցիչը, Թեմական Խորհրդի անունից ըստ կրթական նախարարութեան վերատեսչի համաձայնութեան:

Ծանօթ բ- Սոյն Խորհրդի ժողովին կարելի է հրահրել մի հոգեւորական եւ մի Թաղային բժիշկ, Խորհրդակցական ձայնով:

Ծանօթ գ- Ութ անձնափոխանորդները կարող են մասնակցել Խորհրդի նիստերին Խորհրդակցական ձայնի իրաւունքով:

### 30ԴԻԱԾ 114

Ծնողա-ուսուցչական Խորհուրդը իր առաջին ժողովը գումարում է ընտրութիւնից յետոյ ամենաուշը մինչեւ մեկ շաբաթ եւ կատարում դիւանի ընտրութեան հետեւեալ կարգով՝ մի ատենապետ, մի փոխ ատենապետ, մի ատենադպիր եւ մի նիւթական գործառնութիւնների վերահասու, որին գրաւոր կերպով ներկայացնում են տեսուչին:

Ծանօթ ա- Դպրոցի տեսուչը չի կարող դիւանի անդամ ընտրուել:

### 30ԴԻԱԾ 115

Ծնողա-ուսուցչական Խորհուրդը ունի իր յատուկ կնիքը եւ արձանագրութեան յատուկ մատեանը ու պարտաւոր է 15 օրը մի անգամ ժողով գումարել:

### 30ԴԻԱԾ 116

Ծնողա-ուսուցչական Խորհրդի նըպատակն ու պարտականութիւնները հետեւեալներն են՝

ա- Օժանդակել տեսուչին աշակերտութեան արձանագրութեան աշխատանքներում:

բ- Օժանդակել տեսչին կրթադաստիարակչական անձնակազմի եւ պաշտօնէութեան ընտրութեան եւ հայթայթման աշխատանքներին, ինչպէս նաեւ դասարաշխման եւ դասացուցակների պատրաստման մէջ:

գ- Ապահովել ծնողների գիտական տեխնիկական օժանդակութիւնը դպրոցի բարեկարգման եւ թերութիւնների վերացման խնդրում:

դ- Փոխադարձ մտերմութիւն ստեղծել ծնողների եւ ուսուցչական կազմի միջեւ:

ե- Յատուկ ծրագրումներով, ծնողների համար կազմակերպել հաւաքոյթներ, ու դասախօսութիւնների, ներկայացումների, ուսուցումների եւ ժապաւէտների ցուցադրութեան միջոցով, համադրել ընտանեկան դաստիարակութիւնը դպրոցի կրթական աշխատանքների հետ:

զ- Օգտուել ծնողների փորձառութիւններից եւ մասնագիտութիւններից ի կատար ածելու դասարանային եւ արտադասարանային աշխատանքները:

է-Վերհասու լինել ուսուցիչների եւ պաշտօնէութեան աշխատանքներին եւ շինիչ ու օգտակար առաջարկութիւններ անել պատասխանատու անձանց:

ը- Համագործակցել դաստիարակչական խնդիրների ծրագրման եւ գործադրութեան մէջ:

թ- Մերտ հաղորդակցութիւն ստեղծել ուսուցչական եւ աշակերտական Խորհրդների միջեւ:

ժ- Ցուցակագրել եւ օժանդակել այն աշակերտներին որոնք յաւելեալ դասաւանդութեան կարիք ունեն:

Ճա- Վերահասու լինել յատկացած վարկերի ճշգրիտ գործադրման:

### 30ԴԻԱԾ 117

Ծնողա-ուսուցչական Խորհուրդը իր գործունեայ անդամներից մէկին գրաւոր կերպով ներկայացնում է Իրանի Ծնողա-ուսուցչական հաստատութեան իբրեւ կապ.նախընտրելի է հնարատր եղած պարագայում այդ անձը լինի Կրթական Խորհրդի ներկայացուցիչը:

### 30ԴԻԱԾ 118

Ծնողա-ուսուցչական Խորհուրդը իր աշխատանքները դպրոցում անելի արդիւնատրելու համար, իր մէջ ներառում է ութ յանձնախմբեր որոնք են՝

- 1- Դաստիարակչական եւ դասակական
- 2- Բուժա-առողջապահական
- 3- Ընթերցանութեան եւ գրադարանային
- 4- Արեստից

- 5- Յարաբերական
- 6- Կրթական
- 7- Շինարարական-սպասարկական
- 8- Գիտահետազօտական

### 30ԴԻԱԾ 119

Ծնողա-ուսուցչական Խորհրդի կազմութեան եւ գործունեութեան մանրամասնութեան եւ լուսարանման համար դիմել կրթական նախարարութեան սոյն Խորհրդի ներքին կամուսնադրութեան:

### 30ԴԻԱԾ 120

Ծնողա-ուսուցչական Խորհուրդը, անաւով Կրթական Խորհրդի ներկայացուցիչի յանձնարարութեան, ձեռնարկում է ազգային մշակութային բնոյթ կրող տօնակատարութիւններ, հանդիսութիւններ եւ դասախօսութիւններ, դպրոցի շրջանակում, որպէսզի զարկ տրի հայկականութեան եւ մատաղ սերնդին կապի Ազգային Մրբութիւնների հետ:

### 30ԴԻԱԾ 121

Ուսումնական ծրագրից դուրս, դպրոցական շէնքերի օգտագործումը, որեւէ նպատակի համար, հնարատր է միայն պատկան դպրոցի Ծնողա-ուսուցչական Խորհրդի առաջարկութեամբ եւ Կրթական Խորհրդի թոյլտրութեամբ:

## 19. ՀԱՆՐՕԳՈՒՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

### 30ԴԻԱԾ 122

Թեհրանի Թեմի հայ համայնքի անհատ անդամների առողջապահական եւ այլ հասարակական կարիքները հոգալու համար Թեմական Խորհուրդը հիմնադրում է ազգային բուժարաններ, ծերանոցներ եւ մանկամտրներ ու նման այլ հանրօգուտ հաստատութիւններ եւ կամ իր վերահասութեան ներքոյ է առնում Թեմիս մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող նոյն նպատակներին ծառայող հայկական հաստատութիւններ:

*Ճար. տեսնել էջ 13- ում*

## Թեմական

### 12-րդ Պատգամաւորական Ժողովի ընտրութեան թեկնածուների անւանացանկ

#### Ա. Թարգմանչաց եկեղեցու շրջան

- 1- Դոկտ. Ալֆրեդ Վաղարշակի Անթրոնեսեան
- 2- Դոկտ. Արմինէ Անուշաւանի Ղազարեան
- 3- Արմէն Խուրադուլեան
- 4- Արմէն Բեգլարեան
- 5- Արտեմիս Մկրտչեան Արտաւազդի
- 6- Անդրանիկ Շահբազեան
- 7- Երւանդ Զամանի
- 8- Էլմա Գալստեան Իսախան
- 9- Ժիրայր Շահիջանեան
- 10- Ժորժ Հայրապետեան
- 11- Հերիքնազ (Հելէն) Բարախանեան
- 12- Հիլդա Սարգսեան
- 13- Հայկազ Շիրանեան
- 14- Սանաւազ Խաչատրեան
- 15- Մայիս Արրամի
- 16- Յարութիւն Քեշիշեան
- 17- Յովիկ Յարութիւնեան
- 18- Նորիկ Արրահանեան
- 19- Պետրոս Արզարեան
- 20- Դոկտ. Ռուբիկ Սարգսարեան
- 21- Ռոբերտ Բարայեան
- 22- Սերոժ Մնացական Կարապետ
- 23- Սարգիս Յովսէփեան
- 24- Ծրագ. Վաչիկ Գրիգորեան

#### Ա. Սարգիս եկեղեցու շրջան

- 1- Արշաիր Քեշիշեան
- 2- Ծրագ. Արամայիս Ներսիսեան
- 3- Անելկա (Էլօ) Նազլումեան
- 4- Արթին Բարայեան
- 5- Ալէն Ալէքսէթեան
- 6- Ալբերտ Ղազարեան
- 7- Արտաւազդ Բաղումեան
- 8- Ծրագ. Գէորգ Վարդանեան
- 9- Ծրագ. Էդմոնդ Բէջանեան
- 10- Ծրագ. Էդարդ Զոհրաբեան
- 11- Ժենօ Պարսանեան
- 12- Դոկտ. Լիդա Միրզա Ազոյեան
- 13- Ծրագ. Լեւոն Ահարոնեան
- 14- Ծրագ. Խաչատուր Գալստանեան
- 15- Կարապետ Գրիգորի Սանոսեան
- 16- Հրաչ ԶարիՖեան
- 17- Միշա Հայրապետեան
- 18- Նորայր Շահնազարեան
- 19- Ռաֆիկ Յովհաննիսեան
- 20- Դոկտ. Ռայմոնդ Դանիէլեան (Դանիլանթէն)
- 21- Ռուբէն Կարապետեան
- 22- Ծրագ. Ռազմիկ Ազիզեան
- 23- Ռոբերտ Մարթին
- 24- Սուրէն (Հրայր) Շահբազեան
- 25- Սուրիկ Թիլիմեան
- 26- Ծրագ. Վարդգէս Գասպարեան
- 27- Դոկտ. Ալբերթ Պողոսեան

#### Ա. Վարդանանց եկեղեցու շրջան

- 1- Գուրգէն Քարամեան
- 2- Մուշեղ Ծատրեան
- 3- Ռազմիկ Այդինեան
- 4- Ծրագ. Սերժիկ Ստեփանեան

#### Ա. Աստուածածին եկեղեցու շրջան

- 1- Անետ Տէր Գրիգորեան
- 2- Մաթինէ Տէր Գրիգորեան
- 3- Շահէն Յովսէփեան
- 4- Ծրագ. Ռուբիկ Սարխոշեան
- 5- Դոկտ. Ռազմիկ Յովհաննիսեան

#### Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շրջան

- 1- Արմիկ Աւագեան
- 2- Աշոտ Սիմանի
- 3- Անդրանիկ Հախվերդեան
- 4- Արտաշէս Նազարեան
- 5- Դոկտ. Անդրանիկ Սիմոնեան
- 6- Ծրագ. Ալբերտ Քոչարեան
- 7- Անուշ Աղաջանեան
- 8- Եմովք Սիմոնեան
- 9- Քրիստինէ Ալեքսան Բաղդասարեան
- 10- Հրաչ Քեշիշեան
- 11- Հրայր Խաչատրեան
- 12- Յարութիւն Արմուս
- 13- Վահէ Խաչատրեան
- 14- Վահիկ Խաչագի Չիգանի
- 15- Վարդ Հախիսեան
- 16- Ծրագ. Վարդիա Մելիքի Խաչատրեան

### 12-րդ Պ. Ժ. ընտրութեան թեկնածուների անւանացանկ շրջաններ

#### Ռաշտ

- 1- Պրն. Երւանդ Դարիբի

#### Սարի

- 1- Յովիկ Ղարա Մաքրոսեան

#### Ղազւին

- 2 թեկնածու

#### Արաք

- 1- Բարգէն Արրահանեան
- 2- Արարատ Քեշիշեան
- 3- Վաղան Պողոսեան

#### Անգալի

- 1- Միքայէլ Իւնանեսեան
- 2- Սեպուհ Անթարեզեան

#### Գորգան

- 1- Հայկազ Չոլաքեան

#### Մաշհադ

- 1- Ալֆրեդ Հաւան
- 2- Արմէն Բաղդասարեան




## Շարքագրոյց՝ Իրանում ՇՇ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ արն. Գեղան Ղարիբջանեանի հետ

**Լոյս.- Թոյլ տւեք նախ մեր խորին շնորհակալութիւնը յայտնել, որ Ձեր ժամանակը տրամադրեցիք մեզ, հարցազրոյց անցկացնելու համար: Եթէ թոյլ տաք անցնենք հարցերին: Առաջին հարցը սա է, որ արդեօ՞ք իրականացել են Ձեր նախատեսած ծրագրերը Իրան-Հայաստան յարաբերութիւններում:**

**Պ.-** Ըստ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան, ծրագրերը նախատեսում է Հանրապետութեան նախագահը, այսինքն արտաքին քաղաքականութիւնը նա նախանշում է եւ ես որպէս դեսպան իրականացնում եմ իմ մասով: Պէտք է ասեմ, որ այս մէկ տարի ու 7 ամիսների ընթացքում որոշակի առաջընթաց գոյութիւն ունի, ակտիւացել են փոխայցելութիւնները, հասունացել է որոշ ծրագրերի իրականացումը, առաջին հերթին այստեղ ուզում եմ շեշտել յատկապէս գազատարի կառուցման խընդիրը: Քաղաքական բարձր յարաբերութիւնների հետ գուզընթաց փորձում ենք, որ լինեն նաեւ տնտեսական յարաբերութիւններ, որովհետեւ ի վերջոյ ինչքան տնտեսապէս խորը փոխկապակցւած լինենք մեր հարեան Իրանի հետ, այնքան երկրատեք յարաբերութիւնները աւելի մեծ կը լինեն: Տնտեսական յարաբերութիւնները չէի սաի, որ օգտագործում են ամբողջութեամբ, դա օգտագործում է 50 տոկոսի չափով, այստեղ հսկայական անելիքներ կան: Եթէ առաջին տարիներում գուտ սննդի եւ վառելիքի հետ կապւած խնդիրներ էին, ապա այսօր Իրան-Հայաստան տնտեսական յարաբերութիւնները պիտի ստրատեգիական նոր որակ ստանան եւ իսկապէս լուրջ տնտեսական խնդիրներ իրականացնեն, թէ գազատարը, թէ Մեղրու ՀԷԿ-ը եւ թէ ընդամենը երկու ամիս առաջ Հանրապետութեան վարչապետ Անդրանիկ Մարգարեանի ակնարկած նաւթագոյի գործարարը եւ թէ Քաջարանի թունելը: Յամենայնդէպս մենք որպէս ՀՀ ունենք հզոր հարեան, իր հզոր տնտեսական պոտենցիալով:

**Շ.-** Ստորագրած պայմանագրերի քանի՞ տոկոսն է իրականացել կամ իրականացման ընթացքի մէջ է:

**Պ.-** Պէտք է ասեմ, որ Հայաստանի կառավարութիւնը Իրան-Հայաստան տնտեսական կառավարական յանձնաժողովի կազմը թարմացրել է եւ այն այժմ ղեկավարում է էներգետիկայի նախարար՝ պրն. Կարէն Գալստեանը, որը շատ լուսատեղեակ է եւ յանձնաժողովի հիմնադիրներից է: Պէտք է ասել, որ աւելի քան 80 համաձայնագրերի ու պայմանագրերի մեծ մասը, որ կատարւել են՝ գուտ եղել են մշակութային եւ քաղաքական այլ խնդիրներ, իսկ տնտեսական առումով դեռ անելիքներ կան եւ յանձնա-



ժողովը փաստօրէն ի մի բերեց նախորդ տարիների բոլոր խընդիրներն ու բացթողումները եւ որպէսզի ամէն ինչ որոշակի լինի, պայմանաւորաւորութիւն ձեռք բերեց առաջիկայ ամսում կըրկին հանդիպել, իսկ նոյեմբեր ամսին երեւի եւ մեր եւ Իրանական կողմի համատեղ նիստ տեղի կունենայ, որտեղ արդէն ամբողջութեամբ փաթեթը կը վերանայի եւ ես կարծում եմ, որ այն բոլոր տարողունակ մասը, որ առայժմ մնացել է՝ կը փորձենք նորից թարմացնել եւ շարունակել աշխատանքները: Անկեղծ ասած կան պայմանագրեր, որոնք 60 տոկոսով են իրականացւել եւ կան պայմանագրեր, որոնք միայն թղթի վրայ են:

**Շ.-** Մօտ ապագայում արդեօք նախատեսում է ՀՀ նախագահի կամ վարչապետի այցը Իրան:

**Պ.-** Ընդհանրապէս հարեան երկրների միջեւ փոխադարձ բարձր այցելութիւնները յաճախակի են տեղի ունենում, եւ պիտի ասեմ, որ ամռանը պաշտօնապէս ՀՀ վարչապետը հրաւերը ստացել է եւ անպայման տեղի կունենայ այդ այցելութիւնը: Բայց դեռ ունենք աշխատանքներ, որպէսզի այցելութեան ընթացքում ստորագրուեն նաեւ մի քանի փաստաթղթեր:

**Շ.-** Ընդհանրապէս սպիւռքում եւ մասնատրապէս Իրանում ձեռնարկներ են տեղի ունենում, նախած Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին: Բայց այդ տեղերում չենք նկատում Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ ՀՀ ներկայացուցիչներին: Ինչպէ՞ս կարելի է դա մեկնաբանել:

**Պ.-** Ամենայն Հայոց Հայրապետը քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի յանձնաժողովի ղեկավարներից է, եւ ամբողջ աշխարհում տեղի են ունենում հանդիսութիւններ, իսկ եթէ ուշադիր լինենք կը տեսնենք, որ տօնը կոչւում է Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակ, խօսքը Հայաստանի մասին է եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ. Տ.Տ. Գարեգին երկրորդը ներկայացնում է ողջ հայ ժողովրդին եւ տօնը լինելու է ամբողջ հայ ժողովրդի համար: Ընդամենը երկու օր առաջ Հանրապետութեան նախագահը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նիւ Եորքում հանդիպում են ունեցել համայնքի հետ եւ այն կարծիքն է յայտնել, որ այդ տարւայ ընթացքում եթէ սպիւռքի իւրաքանչիւր հայ ընտանիքից մէկ հոգի այցելի Հայաստան եւ մտնի վառի Ս. Էջմիածնում, ապա իսկապէս դա կը լինի համահայկական: Այստեղ նոյնպէս 1700-ամեակին

## Շարքագրոյց

նւիրած ձեռնարկներ կան, դեսպանութիւնը մասնակցութիւն է ունենում եւ յոյս ունենք, որ տարւայ ընթացքում այս ծրագրերը, այդ թւում նաեւ Հայաստանի մշակութային գործիչների այցելութիւնները իսկապէս տօնը կը դարձնեն համահայկական:

**Ը.- Հայաստանի երկրաշարժից տուժածների համար իրանահայերը մեծ օգնութիւններ էին հաւաքել, բայց դա չի ծառայել իր նպատակին: Այդ գումարը ըստ մեր Թեմական Խորհրդի՝ օգտագործել է Ղափանում մի ծորակաշինութեան գործարան կառուցելու համար: Սակայն դրա աշխատանքները նաեւ ձախող-ւեցին, եւ դա յանձնել է Ս. Էջմիածնին: Այստեղ հարց է առաջանում, որ արդեօք Էջմիածինը զբաղու՞մ է գործարանների կառուցման կամ աշխատացնելու ուղղութեամբ, եթէ այո, ապա այդ գործարանը ե՞րբ կը սկսի աշխատել:**

**Պ.-** Ասեմ, որ տեղեակ եմ, որովհետեւ 1988 թ. երկրաշարժից յետոյ ինչ-պէս, որ սփիւռքը, այնպէս էլ իրանահայութիւնը նեցուկ եղաւ եւ իսկապէս Ղափանում ծորակաշինութեան գործարան կառուցեց եւ սա դրական երեւոյթ եմ համարում, որովհետեւ չի կարելի ամէն ինչ կենտրոնացնել մայրա-քաղաքում, այլ որոշակի քաղաքականութիւն պէտք է ունենալ սահմանամերձ շրջանների համար եւ զարգացնել տնտեսութիւնը, որպէսզի մարդիկ ունենան աշխատանք եւ չլքեն Հայաստանը: Ինչ վերաբերում է Էջմիածնին յանձնել-չյանձնելուն, հասկանալով դա գործարանը կառուցողների որոշումն է եւ Ս. Էջմիածինը նման փորձ ունի, գերմանացիները կառուցեցին տնաշինական մի կոմբինատ, որը փոխանցեցին Էջմիածնին, դա ակտիւ աշխատում է, եւ խոստանում եմ առաջիկայ օրերում լինելու եմ Հայաստանում, այդ թւում այցելելու եմ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, անպայման հետաքրքրելու եմ այդ հարցով եւ վերադառնալուց յետոյ ձեզ փոխանցելու եմ:

**Ը.- Որեւէ առաջխաղացում նկատու՞մ էք Իրանում Հայաստանի մշակութային տան կառուցման գործում:**

**Պ.-** Երբ ես եկայ Իրան, առաջին հերթին Թեմական Խորհրդի եւ մի շարք այլ բարերարների օժանդակութեամբ կարողացանք այս դեսպանատան շէնքը նորոգել եւ կարծես թէ դեսպանութիւնը կոկիկ զարդարւած տեսք է ստացել: Մեր երազանքն է, որ ունենանք հայկական տուֆից կառուցւած դեսպանութեան մի շէնք, որը կունենայ ոչ միայն իր մշակութային բաժինը, համերգասրահը եւ ցուցասրահը, այլ նաեւ տնտեսական արտադրանքը ցուցադրելու համար նմանատիպ սրահ: Առայժմ սա երազանք է, որովհետեւ այս 1.5 տարւայ ընթացքում փորձում են լուծել հողի խնդիրը, այսօր ամենակարեւորը հողի խնդիրն է: Դեսպանութեան շէնք անպայման ունենալու ենք, որովհետեւ ի վերջոյ հարեւան երկրներ ենք եւ հնա-

րաւորութիւններ ունենք Հայաստանից քար բերելու, համայնքի օժանդակութեամբ իհարկէ, ինչու չէ նաեւ, եթէ Հայաստանի բիւջէն թոյլ տայ այս ծրագիրը իրականացնելու եւ այդ շէնքը կառուցելու:

Ինչ վերաբերում է այսօր մշակութային կենտրոն ստեղծելուն, ապա դա շէնքի հետ կապւած խնդիր չէ եւ անկեղծ ասեմ, որ նաեւ հնարաւորութիւնների հետ կապւած խնդիր է, ցաւօք սրտի այսօր ՀՀ-ը բիւջէտում դժուարութիւններ ունի եւ մենք շատ մեղ շրջանակում ենք աշխատում, այսինքն որպէսզի կարողանանք մշակութային գործունէութիւն ծաւալել, պիտի որոշակի գումարներ ունենանք, դրա համար տրամադրելու, աշխատող պահելու, դահլիճներ վարձելու եւ այլն: Բայց այս տարի Իրան այցելեց Հայաստանի մշակոյթի նախարար պրն. Ռուանդ Շառոյեանը եւ նոյնմբերին մենք յոյս ունենք, որ այստեղ տեղի կունենան Հայաստանի մշակութային օրեր, մօտ 30-35 արեստագետներ կայցելեն եւ դա կը լինի առաջին քայլը մշակութային օրերի անցկացման, իսկ յետոյ կը փորձենք, որ դա դառնայ աւանդոյթ եւ ամէն տարի կարողանանք խմբեր եւ արեստագետներ բերել: Մենք որպէս դեսպանութիւն, առաւելագոյնը պիտի ա-նենք, որ Հայաստանի մշակոյթին ծանօթանան իրանցի-ները եւ Իրանի մշակոյթին ծանօթանան հայաստանցի-ները:

**Ը.- Գարաբաղի հարցում փոխզիջումները ինչպիսի՞ քննչ կարող են ունենալ:**

**Պ.-** Երեք օր առաջ ՀՀ նախագահը ՄԱԿ-ի բարձր անբիւրոնից իր ելոյթում շեշտեց, որ խօսք կարող է գնալ միայն խաղաղ բանակցութիւնների մասին եւ առաջարկեց, որ այդ բանակցութիւններին մասնակից լինեն նաեւ արցախցիները, այսինքն Ադրբեջանը հորիզոնական բանակցութիւններ սկսի Արցախի հետ: Որեւէ զիջման մասին խօսք լինել չի կարող, որովհետեւ ի վերջոյ Արցախի Հանրապետութիւնը 9 տարի է, որ բարգաւաճում է, ունի իր օրէնսդրական դաշտը, ունի իր խորհրդարանը, նախագահը, կառավարութիւնը եւ այստեղ որեւէ խնդիր չի կարող լինել, միայն տնտեսական զարգացման հարցն է, ուր նոյնպէս անելիք ունենք, վերջին մէկ տարւում այդ բնագաւառում բաւականին ներդրումներ եղան, չնայած դրան խոչընդոտեց մասամբ մարտի 22-ի ահաբեկչական ակցիան, բայց բարեբախտաբար վստահութիւնը չի խաթարւել եւ յստակ Արցախի նկատմամբ կայ ներդրումների ծրագիր սփիւռքահայերի եւ օտար գործարարների կողմից:

**Ը.- Մերոյի շուրջ ասեկոսների մասին ի՞նչ կատիք:**

**Պ.-** Ես ուղղակի կարող եմ ասել, որ երբեւէ որեւէ հայ չեմ կարծում, որ թոյլ տայ նման ծրագիր նոյնիսկ նա-



## Շարքագրոյց

խազօծելու փորձ արի, ես մի քանի անգամ յատուկ Երեւան եմ գնում-գալիս Մեղրիով եւ ասեմ, ապրում է շրջանը եւ շատ ակտիւ, հիմա էլ կառավարութիւնը յստակ ծրագիր ունի Սիւնիքի, յատկապէս Մեղրիի շրջանի զարգացման առումով: Կառավարութեան որոշումով հոկտեմբերին հաւանաբար կը բացուի նաեւ մեր սահմանային առետրի շուկան, այսինքն որոշակի ակտիւութիւն կը լինի, խնդիրը մէկն է՝ Արցախի, Հայաստանի, սահմանամերձ գօտու համար առաւել եւս: Մենք պէտք է ազգային յստակ ծրագիր ունենանք, սահմանամերձ շրջաններում ապրող մարդիկ ազատեն հարկերից, մի գուցէ կրկնակի աշխատավարձ ստանան, մի գուցէ երեխաների եւ այլ եւ այլ ծրագրեր լինեն: Որովհետեւ միայն խօսքով չի կարելի որեւէ շրջան պահել կամ զարգացնել: Գործով պէտք է անել, եւ կարծես թէ կառավարութիւնը արդէն յստակ ծրագիրը սկսել է, եւ յոյս ունենք որ իրականանայ:

**Լ.- Երբեմն խօսում է Հայաստանի արեւմտեան կամ արեւելեան կողմնորոշումների մասին, ի՞նչ կատիք այդ կապակցութեամբ:**

**Պ.-** Հայաստանը գտնուում է մի տարածաշրջանում, որտեղ ունի մի շարք հարեւաններ: Հարեւաններից առաջինը մեզ համար անշուշտ Իրանի Իսլամական Հանրապետութիւնն է, եւ նաեւ չպէտք է մոռանանք, որ գոյութիւն ունի հիւսիս- հարաւ առանցք, որի ուղղութեամբ որոշակի քաղաքականութիւն է տարւում : Ինչ վերաբերում է այս կամ այն երկրի հետ յարաբերութիւններին, ապա Հայաստանը հաւասարակշուած կոմպլոմետար քաղաքականութիւն է վարում բոլորի հետ եւ ընդհանրապէս եւ կարծում եմ, որ այսօր Հայաստանը ընդգծւած ուղղաձորի մի հաւասարապէս բոլոր երկրների հետ:

**Լ.- Ինչպէ՞ս կը գնահատէք Հայաստանի ներկայ քաղաքական իրավիճակը:**

**Պ.-** Կայուն, որովհետեւ նաեւ ազգի հզոր գիտակցութեան շնորհիւ էր, որ հոկտեմբերի 27-ի ողբերգական դէպքերից յետոյ Հանրապետութիւնը կամաց-կամաց ամենադժար վիճակից ամենայն դէպս մնաց կայուն: Միակ Հանրապետութիւնն է, որում ի վերջոյ փառք Աստուծոյ քաղաքացիական պատերազմի իրավիճակ չստեղծւեց, եւ ինչպէս միշտ հայոց բանականութիւնը յարթեց: Իսկ հիմա բոլորը սպասում են դատավարութեանը եւ յոյս ունենք, որ դատավարութիւնը կը բացայայտի այդ ոճրագործութեան հիմնական հեղինակներին: Իսկ մնացած բոլոր առումներով կառավարութիւնը աշխատում է, խընդիրներ ունի Ազգային Ժողովը, որը օրէնսդրական դաշտի առումով անելիքներից բացի պէտք է փորձի նաեւ ժողովրդի սոցիալական վիճակի առումով որոշակի աշխատանքներ կատարել, որովհետեւ իսկապէս դա կարելու է, եւ ես յոյս ունեմ, որ տայ Աստուած այլեւս մեր պատմութեան մէջ նման ողբերգական ոճրագործութիւններ չլինեն:

**Լ.- Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները ինչպէ՞ս էք տեսնում:**

**Պ.-** Անցեալ տարի Հայաստան-սփիւռք բարձր կարգի համաժողով տեղի ունեցաւ, բայց եթէ ՀՀ պետութիւնը, ինչպէս նաեւ սփիւռքը ակտիւ հետետողական աշխատանք չտանի, ապա ճանապարհը կիսատ կը մնայ: Ես ինքս մի քանի անգամ առիթ եմ ունեցել արտգործնախարար՝ պրն. Օսկանեանի հետ այս առնչութեամբ խօսելու:

լու եւ հաւանաբար կը ստեղծի մի գործադիր մարմին, որը ճիշտ է մէկ տարի յետ ընկաւ ձեզ յայտնի դէպքերի պատճառով, բայց այդ մարմինը յատկապէս հիմա՝ նախագահի ՄԱԿ-ի այցելութիւնից յետոյ հաւանաբար ակտիւ կաշխատի: Ես կարծում եմ, որ յարթահարելու առաջին գործը պիտի լինի գործադիր ակտիւ մարմին ստեղծելը, որպէսզի իրաքանչիւր սփիւռքահայ իմանայ, որ ո՞ւմ է դիմելու եւ տեղեկատուութիւնը ո՞ւմից է ստանալու: Յոյս ունեմ, որ 2001 թւականը, որը Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակն է հէնց պէտք է դառնայ Հայաստան-սփիւռք յարաբերութիւնների նոր մօտեցումների եւ նոր քայլերի տարի: Մենք չպիտի այլեւս միմիայն կենացներ ասենք ու միմեանց գովենք, գործնականում պէտք է Հայաստան-սփիւռք յարաբերութիւններ տեղի ունենան հաւասար պայմաններում, իսկ դրա համար պիտի ամենակարեւոր քայլը արի՝ վստահութիւնը վերականգնել մէկը մէկու նկատմամբ:

**Լ.- Արդե՞օք Հայաստանը ունի բոլոր այն տեսլանքը անդամակցելու Եւրոխորհրդարան:**

**Պ.-** Այստեղ նաեւ ազգային նկարագրի խնդիր է, պիտի ասեմ, որ Հայաստանը բոլոր տեսլանքն ունէր նաեւ այն ժամանակ, երբ մեր հարեւան Վրաստանին ընդունեցին, իսկ մեզ Ադրբեջանի հետ միասին թողեցին ատելի ուշ ժամանակների եւ այսօր Հայաստանը բոլոր այն պահանջները, որ Եւրոխորհրդարանի անդամները պէտք է իրականացնեն՝ փաստօրէն իրականացնում է, մնում է, որ նախարարների խորհրդում վերջնականապէս որոշի Հայաստանի անդամակցութեան հարցը: Ես կարծում եմ, որ պիտի Հայաստանը փորձի բոլոր միջազգային կառույցներում մաս կազմել:

**Լոյս.- Խնդրում ենք Ձեր կարծիքն յայտնել «Լոյս» երկշաբաթաթերթի վերաբերեալ:**

**Պ.-** «Լոյս»-ը բաւական ոգետութիւն է առաջացրել, յատկապէս գովելի է, որ գուտ հայատառ չի, ունի նաեւ պարսկերէն լեզուով բաժին: Ես կարծում եմ, որ «Լոյս»-ը պիտի տարածի ոչ միայն Իրանի սահմաններում, այլ նաեւ Հայաստան եւ բոլոր հայկական օջախներում եւ հայկական ռադիօներում: Ամէն պարագայում շատ գովելի է եւ դրական ակնկալիքներով ենք «Լոյս»-ին նայում: ■

### Ճանաչենք մեր լաւագոյն աշակերտներին



Դայար Վարդանեան  
«Ի. Սահակեան» դպրոց  
Ե դասարան

ä² î ð² Üø àì Ì ² ð² ô â ° ê Ð² ¶ ° ò ÜÆ

Անդրանիկ Խելումեան



1988 թականի Հայաստանի աղետալի երկրաշարժից արդէն անցել է 12 տարի. այդ ահաւոր օրը ողջ աշխարհը ցնցեց հայի ցաւով:

Երկրաշարժը եւ բնութեան նման խռովայոյզ երեւոյթները համընդհանուր ցաւ են պատճառում մարդկութեանը, եւ այդ համընդհանուր ցաւի պատճառով էր, որ 1988 թականին աշխարհի բոլոր ժողովուրդները եւ պետութիւնները մեծաքանակ օգնութիւն ցուցաբերեցին Հայաստանին՝ նրա ժողովրդին ու պետութեանը անկախ նրանից, թէ ով էր դեկավարում Հայաստանը, չէ որ ցաւը համընդհանուր էր, չէ որ մարդու այդպիսի ցաւը սփոփում է միայն մարդկութեան անկեղծ, առանց փոխադարձ ակնկալիքի օժանդակութեամբ, բայց թէ ինչպէս է այդ օժանդակութիւնը տեղ հասել եւ որքանով է տրամադրուել ժողովրդին՝ դա այլ հարց է, որի մասին կարելի է երկար խօսել ու գրել:

Օգնութիւն ցուցաբերողների շարքերում էին Ի. Ի. Հանրապետութիւնը, եւ ինչու չէ նաեւ իրանահայութիւնը: Ես անձամբ ակնատես եմ եղել, թէ ինչպէս են ուրախ եղել մարդիկ, իրենց մէկ շաբաթայ աշխատավարձը ստանալու ու հոգով ու հոգով միմեկին, նաեւ այն մարդիկ, որոնք նոյն բանորի միգուցէ 2 տարայ աշխատավարձի չափով օգնել, եւ այսպէս կարելի է յիշատակել շատ-շատերի, որոնք իրենց կարողութեան սահմաններում մասնակցել են այդ վսեմ ու մարդկային գործին, հազար փառք ու պատիւ նրանց...

Սակայն հիմա, 12 տարի անց, լսում ենք ու կարդում, թէ համայնքի կողմից տրամադրւած օգնութիւնը աղետալներին՝ ծախսուել է ոչ թէ նրանց համար տուն ու տեղ տրամադրելու, ոչ թէ անտուն ու յուսահատ ժողովրդի առօրեայ կարիքները հոգալու, այլ ծախսուել է, անելի ճիշտ վատնուել է ինչ-որ ծորակաշինութեան գործարանի վրայ: Այս կապակցութեամբ տեսնենք թէ, ի՞նչ է ասում Պատգամատրական Ժողովի դիւանի նախագահ դոկ. Հարմիկ Դաւթեանը. «...դա ինչպէս դուր արդէն տեղեակ էք, իրանահայերի կողմից հաւաքուած դրամներով գնուած մի գործարան է, որը արտադրելու է ծորակներ, եւ շուտով այն կը յանձնի շահագործման, որքանով որ ես եմ տեղեակ, այդ հարցով զբաղուած յանձնաժողովը աշխատանք է տանում բնակչութեան տարբեր շրջանների հետ՝ գործարանը տեղաբնակներին փոխանցելու նպատակով: Բայց յաջողութիւններ դեռեւս ձեռք չեն բերուել եւ չեն գտնուել մարդիկ, որոնք ցանկութիւն յայտնեն գործարանի դեկավարութիւնը յանձն առնել...» («Լոյս» երկշքք. համար 5, էջ 9-10):

Հիմա տեսնենք, թէ նոյն խնդրի վերաբերելով ի՞նչ է ասում Պատգամատրական Ժողովի անդամ պրն. Հրաչ

Խոսրովեանը «Տատանման մէջ էինք, թէ գործարանը ո՞րն էր հսկողութեան պիտի յանձնուի, Էջմիածնի, թէ Հայաստանի պետութեան, այսպիսով գործարանը դեռ մնում է անգործածելի եւ փչացման վիճակում»: («Լոյս» երկշաբաթաթերթ, համար 7, էջ 11):

Իսկ ի՞նչ է ասում 15 տարի Պատգամատրական Ժողովի անդամ պրն. Օգսէն Ալեքսանեանը. «Օգնութեան մի զգալի մասը տրամադրուեց աղետալներին: Դրանով զմեզ հազուատեղէն, մթերք եւ ուղարկուեց, ապա մի քանի օդանաւ մթերք եւ 100.000 դոլար ուղարկեցինք Էջմիածին, իսկ մնացած դրամով կառուցուեց ծորակաշինութեան գործարանը, որի շահագործումից յետոյ եկամուտը կրկին պէտք է ծառայէր իր նպատակին»:

Հ.- Ընդհանուր հաւաքուած գումարը ինչքա՞ն է եղել:

Պ.- Կարծում եմ 33 միլիոն թուման: («Լոյս» երկշաբաթաթերթ, համար 10, էջ 12):

Որովհետեւ ճիշտ գնահատած լինենք, եկէք կարդանք պրն. Լեւոն Մհարոնեանի պատասխանները «Լոյս» երկշաբաթաթերթի 13-րդ համարի 12-րդ էջում: «...մօտաւորապէս 70 միլիոն թուման իրանահայութեան օգնութիւնը եղաւ երկրաշարժի աղետալներին եւ այստեղից սկսում է մեր ազգային կեանքի ամենասուկեղի գոյացումը...»:

Հ.- Ընդհանուր է, որ պրն. Վ. Վարդանեանը 100.000 դոլար կանխիկ դրամ է յանձնել Վազգէլ Վեհափառին:

Պ.- Ես այսպիսի դրամի յանձնելուց բոլորովին լուրջ չեմ: Եթէ դա կատարուած լինէր, պիտի ՊԺ-ում զեկուցուէր եւ այդ երբէք չի կատարուել եւ չի էլ խօսուել դրամասին»:

Հակասութիւնը շատ պարզ է, նոյն ժողովներում մասնակցած երեք անհատներ, տարբեր կարծիքներ ունեն նման կարեւոր հարցի մասին. յուսանք, որ այս պարզաբանումները պատճառ չեն դառնայ, որպէսզի յարգելի պատգամատրները այսուհետ խուսափեն հարցազոյցներից: Դէ, ինչ արած, անկախ թերթի պարտականութիւնն է պարզաբանել հասարակութեան մէջ ծագած խնդիրները եւ ի յայտ բերել իրականութիւնը, իհարկէ գնահատելի է 11-րդ շրջանի Պատգամատրական Ժողովում երկար տարիներ մասնակցած բոլոր պատգամատրների աշխատանքը, նրանք իրենց ջանքը չեն խնայել մեր ազգային եւ հասարակական խնդիրները լուծելու գործում, բայց թէ ինչ արած, չի սխալուում այն մարդը որ չի աշխատում:

Համեմայն դէպս ինձ թում է, որ պրն. Խոսրովեանի կարծիքը անելի ռեալ է, քանզի թէ գործարանը «շահագործման» յանձնուելու համար պատրաստ է՝ ապա ինչպէ՞ս է որ «չեն գտնուել մարդիկ, որոնք ցանկութիւն յայտնեն գործարանի դեկավարութիւնը յանձն առնելու»: Կամ ինչ գնահատական պէտք է տանք Հայաստանի պետական գործունեութեանը, որ այն ցանկութիւն չի յայտնում՝ շահագործման պատրաստ գործա-

# Հասարակական

րանի ղեկավարութիւնը յանձն առնելու: Կրկին հարց է ծագում, որ նրանք, ովքեր նման որոշում են կայացրել (գործարանի գնումը) արդեօք հարցրե՞լ են դրան յատկացնողների (իրանահայութեան) կարծիքը, արդեօք այդ դրանը յատկացնողները համաձայն ե՞ն եղել, որ պէսզի աղէտեալների համար տուն ու տեղ ապահովելու նպատակով իրենց կողմից տրամադրած դրամներով ինչ որ մի գործարան գնի:

1988 թւականին, երբ աղէտեալները բաց երկնքի տակ անօթեւան ցերեկ ու գիշեր էին անց կացնում, երբ նրանք տուն չունէին՝ ծորակը նրանց ինչի՞ն էր պէտք: Այնքանով որ ես եմ տեղեակ, ամբողջ Հայաստանում տարին մի քանի հազար հաս ծորակ է սպառում, որ դրանք էլ բերում են տարբեր երկրներից, իհարկէ եթէ Հայաստանում լինի մի այդպիսի գործարան շատ լաւ է, գուցէ որ արտահանելու միջոցներ էլ լինեն, բայց խնդիրը սա է, որ տրամադրած դրամները այդ նպատակի համար չէին մախտեսել: Ինչքան լաւ կը լինէր, որ այդ դրամներով մի քանի շէնք տրամադրէր աղէտեալներին, իրանահայերն էլ իրենց մասնակից զգային այդ ցաւի սփոփման գործում, բայց այնքանով որ ես եմ տեղեակ, դժբախտաբար ժողովրդի դրամներով մինչեւ անգամ մի յարկաբաժին էլ չի տրամադրել ոչ մի աղէտեալի, ինչը ցաւալի ու ամօթալի երեսոյթ է իրանահայերիս համար:

Հետաքրքիր է, որ յարգելիները ինչո՞ւ են տարածում, թէ գործարանը ո՞ւմ տրամադրեն, միթէ Հայաստանը անկախ չէ՞, միթէ՞ Հայաստանը չունի իր պետութիւնը: Պէտք է պատասխան տրուի նաեւ հետեւեալ հարցին, թէ մինչեւ հիմա ինչպէ՞ս է ղեկավարել այդ գործարանը, արդեօք՞ պահակ ունի եւ եթէ ունի ինչքա՞ն է աշխատավարձ ստանում, ընհանրապէս ո՞վ է հոգում գործարանի առօրեայ ծախսերը: Այդ գործարանը ո՞ւմ անունով է գրանցուած, քանի որ դեռ «չեն գտնել մարդիկ որ գործարանի ղեկավարութիւնը յանձն առնեն», փաստօրէն պարզ է արդէն, որ այդ գոյքերի պահպանման ծախսերը վճարում են անկեղծ իրանահայերի տրամադրած դրամներով: Եթէ հաշիւ առնենք, որ այդ գործարանը ամսական ունի 1500 դոլար ծախս, եւ եթէ հաշիւ առնենք, որ մենք ունենք մօտ 100 ուսուցիչներ, որոնք հայերէն են դասաւանդում, հիմա հաշիւք թէ այդ գործարանի ամսական ծախսած գումարներով որքան է հնարատր ատելացնել հայ ուսուցիչների աշխատավարձը, կամ ինչքա՞ն կարելի է հայկական դպրոցներին օգտակար լինել, միթէ թեմակալ Առաջնորդը՝ սրբազան հայրը չէր, որ անձամբ ասում էր՝ «մեր ամենաեական եւ հրատապ հարցը հայոց դպրոցների հարցն է»:

Պէտք է գիտակցել, որ ոչ մի պետութիւն, ոչ մի կազմակերպութիւն կամ միութիւն չի կարող երկար կեանք ունենալ, եթէ անկեղծ չլինի իր բոլոր անդամների նրկատմամբ, որոնք մեր հարազատ ժողովրդի զաւակներն են : Ժողովուրդը լաւ է կարողանում գնահատել: Եկէ՛ք ժողովրդին թերահաւատ չդարձնենք:

Ուրեմն ինչքան լաւ կը լինի եթէ լինենք անկեղծ: Ռոման Ռոլանը ասում է. «անկեղծութիւն՝ սա է իսկական գեղեցկութիւն»: ■

Կանոնադրութիւն... Ծար. էջ 7-ից

## ՅՕԴԱԾ 123

Հանրօգուտ հաստատութիւնները ղեկավարում են համաձայն իրենց ներքին կանոնադրութեան, որը կը հաստատուի Թեմական Խորհրդի միջոցով:

## ՅՕԴԱԾ 124

Հանրօգուտ հաստատութիւնները ենթակայ եւ հաշիւ-տու են Թեմական Խորհրդին:

## ՅՕԴԱԾ 125

Հանրօգուտ հաստատութիւնների նիւթական գործառնութիւնը կը կատարուի համաձայն իրենց ներքին կանոնադրութեան:

## 20. ԹԵՄԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

### ՅՕԴԱԾ 126

Թեմի հայոց Թեմի Թեմական եկամուտները գոյանում են՝

ա- Թեմի շրջանների վրայ դրած ծխական-եկեղեցական տուրքերից:

բ- Թեմական անշարժ եւ շարժական գոյքերի Եկամուտներից:

գ- Կտակներից, նւերներից, տրուած վկայագրերից եւ նմանօրինակ այլ եկամուտներից:

դ- Եկեղեցական խորհուրդների զանձումներից: Ե- Այլ չնախատեսուած աղբիւրներից:

Սոյն կանոնադրութիւնը, որ բաղկացած է 20 գլուխներից եւ 126 յօդուածներից վերանշակուց Պատգամատրական Ժողովի կողմից ընտրուած յանձնախմբի միջոցով, ապա քննարկման եւ վաւերացման ենթարկուց Թեմի հայոց Թեմի 10-րդ Պատգամատրական Ժողովի 20 նիստերի ընթացքում, եւ իր վերջնական հաստատումը ստացաւ Պատգամատրական Ժողովի 42-րդ նիստում գումարած 19 Յուն.1983 թին միաձայնութեամբ:

10-ՐԴ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ԴԻԿԱՆ  
ՆԱԽԱԳԱՂ՝  
ՍՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՂՐԱՆԻ ԳԱՅՈՑ ԹԵՄԻ

ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ՝ ԱՏԵՆԱՊԴԻՐՆԵՐ՝  
ԴՐ.Ո.ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՐԺ.ՏԵՐ.ՍԱՐԳԻՍ ԲԷՆ.ՍԱՐԻԼԵԱՆ  
ՊՐՆ.Ս.ՍՈՒԹԻԱՍԵԱՆ ՊՐՆ. ԺՈՐԺԻԿ ԱՐԱՋԱՐԵԱՆ

# Աւետիք Իսահակեանի յուշերից

## ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ


1957, սեպտեմբեր

Մեծատաղանդ բանաստեղծ Եղիշէ Չարենցին առաջին անգամ ես տեսայ Վենետիկում, 1924 թականին: Չարենցը եկել էր Հայաստանից Երոսպա ճանապարհորդելու: Ինձ մօտ եկաւ նա Հռոմից: Առաջին տպաւորութիւնը, որ ստացայ նրանից, փայլուն չէր: Վատ մարմին, կարճահասակ, բայց խոհական, խելար աչքերով: Մնաց մի ամբողջ ամիս Վենետիկում, եւ մենք շատ եւ շատ խորին կերպով բարեկամացանք, մտերմացանք: Ամբողջ օրը միասին էինք: Առաւօտը կանուխ գալիս էր հիւրանոց, մնում էր մինչեւ ուշ գիշեր մեր տանը: Թափառում էինք հրաշալի Վենետիկում՝ ջրանցքներով, գոնդոլներով. գնում էինք ծովափ, յետոյ գնում էինք Միսիթարեանների վանքը՝ Սուրբ Դազար:

Խօսում էինք անվերջ ամէն հարցերի մասին՝ գիտութեան, գրականութեան, փիլիսոփայութեան, յեղափոխութեան, բոլոր այն մեծ խնդիրների, որ կան, եւ փոքր խընդիրների նաեւ, որ յուզում են մարդկանց:

Վենետիկի հասարակութիւնը իր պարապ ժամերը անց է կացնում աշխարհի մէջ ամենագեղեցիկ հրապարակի՝ Սուրբ Մարկոսի հրապարակի վրայ: Մի կողմը Սուրբ Մարկոսի հրաշալի տաճարն է, միւս երեք կողմերը թանգարաններն են, սրճարանները՝ բոլորն էլ մանրակերտ պալատներ: Եղիշէի հետ էլ մենք անցկացնում էինք Սուրբ Մարկոսի հրապարակի զանազան սրճարաններում: Սուրբ Մարկոսի հրապարակը լեցուն էր աղանձներով, որ կոչում են Սուրբ Մարկոսի աղանձներ՝ հազարաւոր, տասնեակ հազարաւոր, եւ կառավարութիւնը կերակրում է նրանց: Հրապարակում ծախում են հունդեր, սիսեռներ, կերակրելու համար աղանձների: Հասարակութիւնը, մանաւանդ տուրիստական հասարակութիւնը, շարունակ նկարում էր՝ ավերում սիսեռներ բռնած: Աղանձները գալիս, մատում են կտցահարելու համար, եւ՝ ուսերի վրայ, եւ՝ գլխարկների վրայ: Ահա ես ու Չարենցն էլ նկարեցինք Սուրբ Մարկոսի հրապարակի վրայ՝ աղանձների հետ միասին: Չարենցը բախտաւոր եղաւ, որ նրա վրայ մտեցին 3-4 աղանձի, իսկ իմ ձեռքը մնաց դատարկ:

Չարենցը խոհուն, զարգացած մեծ էրուդիցիայի տեր անձնատրութիւն էր, անհանգիստ քնատրութիւն, ըմբոստ եւ տռուն: Բոլոր ազգերի գրականութիւնները գիտէր, լաւ ճանաչում էր եւ մեծ ճաշակի տէր էր: Արդէն ես նրան ճանաչում էի նախքան նրա հետ ծանօթանալը: Ես կարդացել էի (Վենետիկի վանքը ստանում է հայկական ամէն մի հրատարակութիւն, ուր էլ որ լինի) Չարենցի երկհատորեակը, որ տպւած էր Մոսկւայում 22 թականին:



Ինձ վրայ մեծ տպաւորութիւն թողեցին նրա «Դանթեական առասպելը» եւ «Տաղարանը», լիրիկական մի շարք բանաստեղծութիւններ, մանաւանդ նրա հայրենասիրական բանաստեղծութիւնը՝ մեծ խորքով՝ «Ես իմ անուշ Հայաստանին»: Ինձ համար, առանց չափազանցութեան, բոլորովին օբյեկտիւ կերպով կասեմ, որ հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծութիւն չի գրւած՝ հայրենասիրութեան տեսակէտից: Դա եզակի, աննախընթաց բան է: Նոյնիսկ կարելի է ասել, որ երոսպական, համաշխարհային գրականութեան հայրենասիրական ժանրի բանաստեղծութիւններ, այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով՝ գրւած բան՝ գոցել ես չեմ յիշում:

Պէտք է ասեմ, որ Չարենցը Հոկտեմբերեան սոցիալիստական էպոխայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականութեան մէջ, եւ նա բազմակողմանի կերպով ազդեց հայ գրականութեան վրայ, մանաւանդ ռիթմի, լեզուի, տաղաչափութեան, պոետիկայի կողմից:

Եղիշէ Չարենցի կորուստը յաիտեան ողբալի է, եւ եթէ նա ողջ մնար, դեռ ինչե՛ր կարող էր տալ: Յամենայն դէպս, նա ինչ որ տուց, դա մի անմահ կոթող է հայ գրականութեան մէջ:

Յարգանք նրա յիշատակին: ■

ՏԱԿԱԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ԲԱՅՑ ԳԻՏԱԿԻՑ

Այս օրերին «Լոյս»-ի գրասենեակ մտաւ տակաւին երիտասարդ, բայց գիտակցութեամբ հասունացած, բարեհամբոյր եւ հայրենասէր մի երիտասարդուհի, որի հետ ունեցանք մի մտերմիկ եւ հաճելի հանդիպում:

Արագ Ղազարեանի արտայայտած մտքերը, հայրենասիրական ոգին, կշռադատած կեցւածքը եւ արւեստագետին վայել իւրայատուկ խառնւածքը, մեծ տպաւորութիւն էր թողնում:

Այն ինչ ստորեւ կը կարդաք, մեր մտերմիկ եւ միեւնոյն ժամանակ լուրջ թեմաներով կատարած հարցազրոյցի ամփոփ պատկերն է:

**Վաշիկ Վարդանեան**

**Շարք.-** Կը խնդրենք ներկայանալ:

**Պատասխան.-**

Արագ Ղազարեան, ծնել եմ 1981 թ. Իրանի Սպահան քաղաքում:

Տարրական կրթութիւնս ստացել եմ հայոց ազգային «Արմէն» դպրոցում:

Տարրականը ասար-տելուց յետոյ 4 տարի սովորել եմ «Քանանեան» դպրոցում: Այնուհետեւ ուսումս շարունակել եմ «Խաղիջէ Բոք-րա» դպրոցում: Այժմ սովորում եմ համալսարանում:

**Շ.-** Ո՞րն է Ձեր ճախասիրութիւնը:

**Պ.-** Նկարչութիւնը:

**Շ.-** Ե՞րբ էք սկսել նկարչութիւնը:

**Պ.-** Արդէն 6 տարի է նկարում եմ, բայց դա միանուագ չի եղել, երբեմն դասերիս պատճառով ընդհատել եմ այն:

**Շ.-** Նկարչութեան ո՞ր ձեւն էք հաւանում եւ որո՞վ էք աշխատում:

**Պ.-** Նախ գունաւոր մատիտով եւ ջրաներկով էի նկարում, բայց վերջերս սկսել եմ իւղաներկով աշխատել: Իսկ իմ ընտրած թեմաները «բնութիւն» եւ «դիմանկար» են: Ես արւեստում «իրատեսութիւնը» գերադասում եմ ամէն բանի:

**Շ.-** Ի՞նչ կարծիք ունեք հայ համայնքի մասին:

**Պ.-** Այսօր մեր ժողովրդի շահը պահանջում է՝ միասնականութիւն: Միասնականութեամբ կարող ենք լուծել մեր դէմ ծառայած բոլոր հարցերը: Բայց քանի որ մեր համայնքում կուսակցական եւ անջատողական գաղափարախօսութիւն է գնում, ես անձամբ լաւատես չեմ:

**Շ.-** Դուք ելքը ինչու՞մ էք գտնում, քանի որ գաղափարախօսութիւնը եղել է եւ կը լինի:

**Պ.-** Իմ կարծիքով մախ մեր թեմը, որ ապօրինի ձեւով անջատել է Մայր Աթոռից, պիտի դարձեալ միանայ: Առհասարակ բոլոր թեմերը պիտի միանան Ս. Էջմիածնին:

**Շ.-** Իսկ ինչու՞վ էք տրամաբանում, որ եթէ միանանք Ս. Էջմիածնին, մեր համայնքի հարցերը կը լուծեն:

**Պ.-** Երբ թեմը միանայ Ս. Էջմիածնին, մեր ժողովուրդը իրեն Հայաստանին աւելի մօտ կը զգայ եւ առաւել եւս այն, որ այլեւս գոյութիւն չի ունենայ երկպառակտման քարոզչութիւն: Այդ քարոզչութեան հետեւանքով է, որ

այսօր մեր ժողովուրդը կորցրած իր հաւատքը թողնում է իր հարազատ ծննդավայրը եւ փախչում դէպի «դրախտավայր» ա-րեւմուտք:

**Շ.-** Ձեր կարծիքով ո-րո՞նք են

արտագաղտի հիմնական դրոշմապատճառները:

**Պ.-** Տարիների ընթացքում որոշ «ազգայիններ» իրենց թիկունքում ունենալով մեզ բո-լորիս յայտնի կուսակցութեան, սկսեցին քարոզչութիւն տանել Հայաստանի եւ նրա կարգերի դէմ: Իսկ դրանից ո՞վ շահեց: Միայն ու միայն հայ ժողովրդի թշնամին: Իսկ նրանք միթէ չէի՞ն հասկանում, որ կարգերը ժամանակա-կաւոր են, եւ հայրենիքն է, որ պիտի կանգուն մնայ: Ար-տագաղտի պատճառներից են նաեւ Ֆինանսական եւ տնտեսական հարցերը: Համեստիս կարծիքով այդ հար-ցերը անշուշտ կարող է լուծել մեր Ազ-գային Իշխանու-թիւնը:

**Շ.-** Ի՞նչ խորհուրդ կը տայիք մեր իրանահայ երիտասարդներին:

**Պ.-** Ինչքանով, որ ես եմ ծանօթ եւ միշտ կապ եմ հաստատում նրանց հետ, պէտք է ասեմ նրանք տատանման մէջ են: Մի տեսակ ցաւալի անտարբերութիւն է տիրում: Ես խորհուրդ կը տայի մեր երիտասարդներին, չհաւատալ արեւմուտքի խաբուսիկ խոստումներին: Ինչքան հեռանանք մեր հայրենիքից, այնքան աւելի շուտ կը կորցնենք մեր ազգային դիմագիծը՝ ինքնութիւնը:

**Շ.-** Այս վիճակից դուրս գալու համար կոնկրետ ի՞նչ առաջարկներ ունեք: Ի՞նչ պէտք է անել եւ ո՞ւմ գործն է դա:

**Պ.-** Մեր Ազգ. Իշխանութիւնը պէտք է օգտւելով իր բո-լոր միջոցներից բացայայտի թէ ինչ՞ քաղաքականութիւն է կիրառում հայ ժողովրդի թշնամիների կողմից՝ Հայաստանը ներս մերձակայ շրջանները հայաթափ անելու:

Մեր գործարար մարդիկ ինչո՞ւ իրենց բոլոր կապի-տալները չեն ներդրում ի շահ մեր հայրենիքի եւ համայնքի բարգաւաճման: Եթէ անցեալում Հայաստանի կարգերը խոչընդոտ էին համարում, ապա այսօր ինչո՞վ են տրամաբանում իրենց խուսափողական վերաբերմունքը:

**Շ.-** Մեր գաղութում հիմա ամենացաւալի իրականութիւններից մէկը՝ մեր հայկական դպրոցների, մանաւանդ հայոց լեզուի դաստանդման անմխիթար վիճակն է: Ի՞նչ է Ձեր կարծիքը:

**Պ.-** Դուք լրիւ իրաւացի էք: Այսօր մեր դպրոցներում դասաւանդման մակարդակը իրօք իջել է, եւ դա մեծ ցաւ է մեր բոլորի համար: Հէնց այդ պատճառով էլ հայ ծնող-ները ստիպւած իրենց երեխաներին ուղարկում են ոչ հայկական դպրոցներ: Իսկ ինչ վերաբերում է հայոց լեզուի դասաւանդման անմխիթար վիճակին, պէտք է ասեմ, որ դա երկու հիմնական պատճառներ ունի: Նախ հայոց լեզուն որպէս առարկայ պէտք է պաշտօնապէս մտցւի Կրթ-թական Նախարարութեան կողմից ճանաչւած առարկա-ների շարքը:



Ճար. տեսնել էջ 16-ում

# Նամականի

## Ստացած նամակներ



«Լոյս» թերթի յարգելի խմբագրութիւն  
Ընտրակալութիւն եւ յայտնում, որ ամէն  
երկու շաբաթ ինձ ուղարկում էք իմ սիրած  
«Լոյս» երկշաբաթաթերթը: Չեր բոլորին  
երջանկութիւն եւ համբերութիւն եւ մաղթում,

որ կարողանաք այդ պիսի գործեր տպագրել:

*Չեզ միշտ յարգող՝  
Յայկ Գալստեան*

*Թերթան*

«Լոյս».-Նամակագիրը երկար բացատրում է իրեն դիմած  
Եհովայի վկաներից երկուսի մասին եւ քննադատում նրանց  
գործունեութիւնը եւ առաջարկում է զգուշօրէն պայքար մղել  
նրանց դէմ:



«Լոյս» երկշաբաթաթերթի յարգելի խմբագիր  
Պարոն Էդիկ Բաղդասարեան

Մեծ հաճոյքով եւ ուրախութեամբ ստացայ «Լոյս»-ի  
առաջին համարը Վաշինգթոնում: Ես Չեզ լաւ գիտեմ եւ Չեր  
կարողութիւններին լաւատեղեակ եմ, որովհետեւ որպէս գրող  
երկար տարիների փորձառութիւն ունեք, ուստի յոյսով այդ  
դժարին գործում յաջող լինէք:

Իրանահայ համայնքը երկար տարիներ «Լոյս»-ի մտան  
թերթի կարիք էր զգում, սակայն գրիչ շարժողներից շատերը  
վերջին երկու տասնեակում թողել էին երկիրը եւ այդ գործի  
ասպարէզը էլ անելի դժարացնելով: Բայց ես շատ ուրախ եմ,  
որ դուք շատ-շատերի մտան չէք թողել երկիրը եւ մնացել էք  
Իրանում եւ այսպիսի հրաշալի ձեռնարկներ էք անում:

Շատ ուրախալի երեւոյթ էր: Քո հետ համագործակցում եմ  
այնպիսի անհատներ, որպիսիք եւ պրն. Լեւոն Սհարոն-եանը:  
Մրտանց շնորհատրելով այդ ձեռնարկը, էլ անելի յաջո-  
ղութիւններ եմ ցանկանում:

Շատ շնորհակալ կը լինեմ վճարման եղանակի մասին  
տեղեկացնելով, ինձ ուղարկէք «Լոյս»-ի համարները:

*Յարգանքներով՝  
Վազգէն Թահմասրի  
Վաշինգթոն*



Նախ եւ առաջ խորին շնորհակալութիւն «Լոյս» երկշա-  
բաթաթերթին, նաեւ շատ պատարժան թերթի խմբագիր՝ Էդ.  
Բաղդասարեանին, թերթի թանկարժէք եւ իսկապէս պատ-  
ւատր էջերից մէկը ինձ տրամադրելու առիթով:

Քանզի առաջին մշակութային օջախն է, որ առանց  
խտրականութեան եւ մեծ սիրով ու ջերմօրէն ընդունեցին  
ինձ, ի տարբերութիւն որոշ հայկական մշակութային օջախ-  
ների, որոնք մերժել էին համագործակցել, պատճառաբանե-  
լով հայաստանցի լինելս:

Անչափ շնորհակալ եմ, որ հնարաւորութիւն տրեց ինձ,  
թէկուզ մի փոքրիկ մասով իմ ստեղծագործութիւնների սրտիս  
էջերից տրամադրելու, երեւի թէ աշխարհի տարբեր ծայրե-  
րում ապրող իմ ժողովրդին:

Եւ իսկապէս «Լոյս»-ը շատ արագ կերպով թափանցեց մեր  
մէջ, ինքնատիպ մտքի պայծառութեամբ, բաժինների մուրք  
երանգաւորութեամբ եւ ամենակարեւորը ինչպէս նշել եմ,  
նաեւ շատ յարգարժան մարդիկ, անկուսակցականութեամբ,  
որը թերթի ամենամեծ բարենիշն է:

Եւ վերջապէս թոյլ տուէք խօսքս ընդհանրացնել մի փոք-րիկ  
բանաստեղծութիւնով, որը ի շնորհակալութիւն նւիրում եմ  
«Լոյս» երկշաբաթաթերթին:

**«Լոյս»**

**Քո լոյսն է «Լոյս»**  
Պայծառացնում միտքը մարդկանց  
Ղեկ գաղտնիքներ մշակոյթի:  
**Քո լոյսն է «Լոյս»**  
Դռներ բացում ի դէմ մարդկանց,  
Ղեկ ճամբաներ գիտութիւնի:  
**Քո լոյսն է «Լոյս»**,  
Որպէս փարոս, որպէս ճրագ  
Սթութիւնի ու խաւարի,  
**Քո լոյսն է «Լոյս»**,  
Որ ջերմութեամբ իր հարազատ,  
Ջերմացնում է շատ սրտերի:  
**Քո լոյսն է «Լոյս»**  
Որ պիտի դեռ ջերմացնի  
Շատ սրտերի:

*Թերեզա Քանքարեան*

Ցանկանում եմ անծայր յաջողութիւնների համաստեղութիւն:



Սիրելի պարոն Բաղդասարեան՝

Նախ բարեւ եւ ուզում եմ յայտնել Չեզ իմ խորին ուրա-  
խութիւնը՝ «Լոյս» երկշաբաթաթերթի տպագրելու առթիւ, յոյս  
ունենալով տեսնել Լոյսի հազարերորդ տպագրած համարը:  
Այս նամակին կից ուղարկել եմ մի յօդած, «Հայոց գրի  
գեղագիտութեան եւ մարդաբանութեան» մասին: Յոյս ունե-  
նալով օգտակար հանդիսանայ: Ցանկանում եմ առաւել ուժ  
ու աւին:

Մնաց բարով:

*Յարգանքներով՝  
Յարշադ Սահայի*

**Տակաւին...**

**Ճար. էջ 15-ից**

Երկրորդը՝ հայ լեզուի ուսուցիչ-ուսուցիչների մակարդակի  
հարցն է: Ես չեմ ցանկանում թերագնահատել մեր սիրելի  
ուսուցիչ-ուսուցիչներին, բայց իրօք նրանց կարողութեան մա-  
կարդակը պէտք է բարձրացնել:

**Գ.- Չէ՞ք գտնում, որ այդ բացը լրացնելու համար  
անհրաժեշտ է մասնագէտներ հրաւիրել Հայաստանից:**

**Պ.-** Դա շատ ճիշտ մօտեցում է, բայց ցաւօք գործնա-  
կանում չի իրականացում: Մենք Ջուլայում ունեցել ենք  
մտան մի փաստ՝ Հայաստանից հրաւիրել էին թատրոնի  
եւ ասմունքի մասնագէտներ, սակայն նեղմիտ եւ կաղա-  
պարած մարդկանց անվայել վերաբերմունքի պատճա-  
ռով չդիմացան եւ թողեցին ու հեռացան: Ահա այս է ցաւը:

**Ը.- Ի՞նչ սպասելիք ունեք իրանահայ մամուլից:**

**Պ.-** Դուք իրօք ազգաներ աշխատանք էք տանում: Մանաւանդ  
այս ծանր օրերին թերթ հրատարակելը իսկապէս մեծ  
նիւրաբարութիւն է պահանջում: Ես մասնաւոր-րապէս  
առանձնացնում եմ «Լոյս»-ին: Թերթի կողմից ճիշտ որոշում է՝  
իր էջերի մի մասը պարսկերէն բաժնին յատկացնելը, քանզի  
այսպիսով պարսիկ ընթերցողը եւս առիթ կունենայ ծանօթանալ՝  
մեր ժողովրդի մշակոյթին, պահանջներին եւ արդար  
իրաւունքներին: ■



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Պատմական ակնարկ)

ՀԽՍՀ բոլոր համագումարները եւ նստաշրջանները կայացել են մայրաքաղաք Երեւանում:

1947թ. փետրվարի 9-ին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի երկրորդ գումարման ընտրությունները:

Կենտրոնական ընտրական յանձնաժողովի հաղորդման համաձայն ձայնի իրաւունք ունեցող 713240 մարդու ընդհանուր թիւից ընտրութիւններին մասնակցել էին 713164 մարդ, որը կազմում էր ցուցակագրած ընտրողների ընդհանուր թիւի 99,99 տոկոսը: Ընտրած 269 դեպուտատներից 203-ը կոմունիստներ էին, 75-ը՝ կին: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ էին ընտրել Ի. Ստալինը եւ Վ. Մոլոտովը, որոնք իրենց կեանքում այդպէս էլ Հայաստանում չեղան, գիտնական Վիկտոր Համբարձումեանը, բանաստեղծ Աւետիք Իսահակեանը, գեներալ Իւան Բաղդամեանը: Նոյն թականի մարտի 28-ին Երեւանում, բացում է Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որը ընտրում է խորհրդի նախագահ, մանրատային յանձնաժողով, մշտական յանձնաժողովներ, նախագահութեան նախագահ եւ անդամներ, կազմում է կառավարութիւն, ընտրում ՀԽՍՀ Գերագույն դատարան: Նստաշրջանը տեւում է 2 օր:

1947թ. յուլիսի 10-11-ը տեղի է ունենում ՀԽՍՀ ԳԽ երկրորդ նստաշրջանը, որը հաստատում է հանրապետութեան 1947թ. պետական բիւջէն եւ 1946թ. պետական բիւջէի կատարման հաշիւետութիւնը, փոփոխութիւններ եւ լրացումներ է մտցնում ՀԽՍՀ Մահմանադրութիւնում, ելնելով ԽՍՀՄ Մահմանադրութիւնում տեղի ունեցած փոփոխութիւններից:

1948թ. մարտի 22-23-ին տեղի է ունենում ԳԽ երրորդ, 1949թ. 7-8-ին՝ չորրորդ, 1950թ. յուլիսի 6-7-ին՝ հինգերորդ նստաշրջանները, որոնք հաստատում էին տւեալ թականի պետական բիւջէները եւ ԳԽ նախագահութեան հրամանագրերը:

1951թ. փետրվարի 25-ին տեղի ունեցան ՀԽՍՀ ԳԽ երրորդ գումարման ընտրությունները: Ընտրողների ընդհանուր թիւը կազմել է 786263 մարդ, որոնցից ընտրութիւններին մասնակցել են 786263 մարդ (99,99 տոկոս): Ընտրել էին 289 դեպուտատներ, այդ թում Ստալինը, Մոլոտովը, Մալենկովը, Բերիան եւ Միկոյեանը:

1951թ. մարտի 30-31-ը տեղի է ունենում ԳԽ առաջին, 1952թ. ապրիլի 6-7-ը՝ երկրորդ, 1953թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը՝ երրորդ, 1954թ. ապրիլի 1-2-ը՝ չորրորդ, յունիսի 3-4-ը՝ հինգերորդ նստաշրջանները, որոնք հաստատում են տւեալ տարւայ պետական բիւջէն եւ ԳԽ նախագահութեան հրամանագրերը:

1955թ. մարտի 6-ին տեղի ունեցան ՀԽՍՀ ԳԽ չորրորդ գումարման ընտրությունները: Ինչպէս նախորդ ընտրություններում, այս անգամ եւս ընտրություններին մասնակցել էին ընտրողների 99,99 տոկոսը, ընտրած 300 դեպուտատներից 209 ԽՍՀՄ անդամ էին, 40-ը՝ բանուր, 67-ը՝ կոլտնտեսական, 91-ը՝ կին:

Ի տարբերութիւն ԳԽ նախորդ գումարումների, այս գումարումը տարեկան հրաւիրում է երկու նստաշրջան եւ բացի պետական բիւջէի հաստատումից նստաշրջանում քննարկում են հանրապետութեան տնտեսութեան, բնութեան, մշակոյթին վերաբերող հարցեր:

1955թ. ապրիլի 5-6-ը տեղի է ունենում ԳԽ առաջին, 1956թ. յունիսի 23-24-ը՝ երկրորդ, յուլիսի 25-26-ին՝ երրորդ, 1957թ. մարտի 15-16-ը՝ չորրորդ, յունիսի 6-7-ը՝ հինգերորդ, 1958թ. յունիսի 29-30-ը՝ վեցերորդ, մայիսի 13-14-ը՝ եօթերորդ, 1959թ. յունիսի 19-20-ը՝ ութերորդ նստաշրջանները:

1959թ. մարտի 15-ին տեղի է ունենում ՀԽՍՀ ԳԽ հինգերորդ գումարման ընտրությունները:

ՀԽՍՀ ընտրողների թիւը առաջին անգամ անցաւ միլիոնի սահմանագիծը եւ կազմեց 1.045394 մարդ: Ինչպէս միշտ ընտրութիւններին մասնակցեց ընտրողների 99,99 տոկոսը:

Ընտրած 300 դեպուտատներից 97-ը կանայք էին, 204-ը՝ ԽՍՀՄ անդամ, 134-ը՝ բանուր եւ կոլտնտեսական:

1959-1962 թթ. ընթացքում գումարեց Գերագույն խորհրդի 9 նստաշրջան:

1963թ. մարտի 17-ին տեղի է ունենում ՀԽՍՀ ԳԽ վեցերորդ գումարման ընտրությունները: Դեպուտատների կուսակցական, սոցիալական եւ սեռական կազմը մնում է անփոփոխ: Ընտրած 300 դեպուտատներից 96-ը կանայք էին, 204-ը՝ ԽՍՀՄ անդամ, 133-ը՝ բանուր եւ կոլտնտեսական:

1963-1966թթ. տեղի է ունենում ԳԽ 9 նստաշրջան:

1967թ. մարտի 19-ին տեղի է ունենում ՀԽՍՀ ԳԽ եօթերորդ գումարման ընտրությունները: Այս անգամ ընտրությունների մասնակիցների թիւը մի փոքր նւազել էր եւ կազմեց 99,96 տոկոս, անվաւեր ճանաչւած բիւլետենների թիւը կազմում էր 3 հատ:

310 դեպուտատներից 101-ը կանայք էին, նոյնքան էլ անկուսակցականներ, 139-ը՝ բանուրներ եւ կոլտնտեսականներ:

1967-1970 թթ. տեղի է ունենում ԳԽ 8 նստաշրջան:

1971թ. յունիսի 13-ին տեղի ունեցան ՀԽՍՀ ութերորդ գումարման ԳԽ ընտրություններ: Ընտրողների 99,99 տոկոսը մասնակցեց ընտրություններին: Ընտրած 310 դեպուտատների թում էին 103 կին կամ 33,9 տոկոս, անկուսակցականներ՝ 105 մարդ կամ 33,2 տոկոսը, դեպուտատներից 149-ը կամ 48,1 տոկոսը բանուրներ ու կոլտնտեսականներ էին:

1975թ. յունիսի 15-ին տեղի է ունենում ՀԽՍՀ իններորդ գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները: Ընտրած դեպուտատների քանակը եւ որակական կազմը մնացել էր անփոփոխ: ■

Ճար. 6

# 130 ի ≈ ծօ՞՞ Մ ä ≈ ի ՅàօÀÆօՍ ¶ ¾àð¶ â ≈ օàօԲ

## Արմեն Կարապետեան Պատմական գիտութիւնների բեկնածու

19-րդ դարի 80-ական թթ. Արեւմտահայաստանում սկզբնաւորում է հայդուկական շարժումը, որի հերոսական դէմքերից է Գեորգ Չաւուշը: Նա ծնել է 1870 թ. Մասունի Բասնք գաւառաւի Սկօինք գիւղում: Ծնողները փափագում էին, որ իրենց որդին գրել-կարդալ սովորի եւ քահանայ դառնալով, օգտակար լինի ընտանիքին: Փոքրիկ Գեորգին ուղարկում են Ս.Առաքելոց վանքի դպրոց: Մակայն հոգեւոր գործիչ պատրաստելու՝ ծնողների ցանկութիւնները ի դերել են ելնում: Պատանի Գեորգի ընթաստ բնատրութիւնն իրենն աճում է: Դեռ-ես վանքի դպրոցում ուսանելիս նա հանդիպում է ազատագրական շարժման յայտնի գործիչներ Արաբոյին, ալիզունանցի Լեւոնին եւ Մխօ Շահեմին. նրանք անրապնդում են ընթաստ պատանու ձգտումները առ ժողովրդի ազատագրութեանը:

Մի օր էլ գիւղի ապշահար հայեացքի առաջ նա յարձակում է երկու քրդերի վրայ, որոնք արհամարհաբար քրել գալով «գիւղի եկեղեցիի ընկուզեմիի տակ, սկսան քարով ու փայտով ընկուզներ վար քափել»: Դէպքից շատ չանցած, Արաբոյի ձեռակալութիւնից յետոյ, նա 1890 թ. մեկնում է Հալէպ՝ զէնք ձեռք բերելու: Հալէպում հանդիպում է հնչակեան գործիչ Մուրադին (Հ. Պոյաճեան): Ձէնք հայթայթելուց յետոյ, Գ.Չաւուշը վերադառնում է հայրենիք եւ Գեղիզուզան գիւղում հանդիպելով Մուրադի հետ, կազմաւորում են 12 հոգուց հայդուկային մի խումբ: Դա Գ. Չաւուշի հայդուկային գործունէութեան սկիզբն էր:

1890-ական թթ. պարբերական էին քրդական աւագակախմբերի կողոպտչական արշաւանքները Մասունի վրայ: Նրանց դրդողը սուլթանական կառավարութիւնն էր, որ ձգտում էր ծնկի բերել լեռնականներին:

1891-93 թթ. Մասունում տեղի են ունենում բազմաթիւ կռիւներ, իրեն փայլուն է դրսևորում ապագայ հայդուկայեանը: Գեորգ Չաւուշի անունը մեծ տարածում ստացաւ Մասունոյ 1894 թ. ապստամբութեան օրերին: Ուժերն անհաւասար էին: Ի վերջոյ, Մասունը ընկաւ: Գեորգը Մուրադի եւ չորս հայդուկների հետ քաքնեց Հարսոք գիւղի քարայրում, սակայն մատնեց ու մէկ օրայ կռից յետոյ զերի վերցւեց: Բարեբախտաբար, երկար չեն մնում բանդարկած: Երեք ընկերների հետ յաջողում է փախչել Մուշի բանտից: Գեորգ Չաւուշի գործունէութեան երկու տարիները անցնում են Մասունոյ աշխարհում, ուր սկսել



էին ընդհանուր ապստամբութեան կազմակերպման աշխատանքները: Գեորգը համագործակցում է Գուրգէնի եւ Հրայրի հետ: 1899 թ. ապրիլին Յրօնք գիւղում եօթ հայդուկների հետ գոհում է Գուրգէնը, հոկտեմբերին Գեղարշէնի ռես Աւոյի միջոցով թունաւորում է Աղբիւր Սերոբը:

1900-1901 թթ. Ֆիդայական շարժումները կրկին աշխուժանում են: Գլխաւոր դէմքերն են դառնում Անդրանիկն ու Գեորգ Չաւուշը, նախ հաշիւարդար են տեսնում դաւաճան Աւոյից, ապա Խալիլից:


1901 թ. նոյեմբերին հայդուկների 27 հոգուց խումբը Անդրանիկի, Գեորգի եւ Յակոբ Կոտայեանի գլխաւորութեամբ մղում է Առաքելոց վանքի հերոսական կռիւը

թուրքական կառավարական զօրքի դէմ: Այս կրում էլ նա վաստակում է «Չաւուշ» մականունը: 1903 թ. վերջին պաշարում է Մասունը: 1904 թ. մարտից սկսում է Մասունի հերոսական ինքնապաշտպանութիւնը: Նախապէս կազմում է զինուորական խորհուրդը, անդամներ են ընտրում Անդրանիկը, Մուրադը, Մէլո Պօղոսը, Կայծակ Առաքելը, Գիւմուշխանցի Աւօն, Սմբատը եւ Գեորգ Չաւուշը: 1904 թ. ապրիլից թէժ մարտեր են մղում: Գեորգը ստանձնում է հարաւային ճակատի հրամանատարութիւնը: 200 հոգի էին, տեղի բնակիչներից 700-800 հոգի միացել էին նրանց: Թշնամու կանոնաւոր զօրքի եւ ոստիկանների թիւը 10 հազար էր, որոնց միացել էին նաեւ 7 հազար քրդեր: Մասունոյ հերոսական ընդվզումը խեղդեց արեան մէջ, Ֆիդայիները տուցին զգալի կորուստներ: Կռիւներից յետոյ Ֆիդայական ուժերը նահանջեցին վան:

Գեորգ Չաւուշը վերադառնում է Տարօն: Փորձում է աշխուժացնել հայդուկային շարժումը ընդդէմ հայերին հողագրկող եւ նրանց հողերին ու գիւղերին տէր կանգնող քուրդ ցեղապետների: Այդ տարիներին նրա անունը արասափի էր մատնում քրդերին: Չաւուշը 1905 թ. ապրիլի 25-ին տալիս է Խարսի կռիւը, որտեղ թշնամին կորցնում է 24 սպայ եւ 60 զինուոր:

1907 թ. մայիսի 27-ին Գեորգ Չաւուշը Մուլուխ գիւղում մղում է իր ամենավերջին Ֆիդայական կռիւը, ուր մահացաւ վիրաւորում է ու յաջորդ օրայ արշալոյսին մահացնում:

Ժողովուրդը իր հոգում պահեց, փայփայեց քաջ Ֆիդայու կերպարը, նրա մասին տասնեակ երգեր ու զրոյցներ հիւսեցին: ■



## ՊՐՈՍԱՍԻ ԲԱՂՑԿԵՐԻ ԿՏԱՆԳԸ ՆԻԱԶԵՑՆԵԼՈՒ ՌԻՂԻՆԵՐ



(Քաղաժ HEALTH ամսագրից) ԲԺ. Տիմոտի Սակ Կալ

Բազմաթիւ տղամարդկանց համար մտահոգութիւնների առաջին շարքում է գտնուում պրոստատի քաղցկեղի վտանգը: Եւ դա ունի իր յարգելի պատճառը: ԱՄՆ-ում ամէն տարի նկատուում է պրոստատի քաղցկեղի 180,000 ախտորոշման դէպք, որից աւելի քան 30,000-ը մահուան են դատապարտուում:

Ինչպէս շատ այլ տեսակի քաղցկեղների, այնպէս էլ պրոստատի դէպքում բուժման յաջողութեան բանալի է հանդիսանում վաղ յայտնաբերումը:

Մասնագէտները, սակայն, շարունակում են կասկած յարուցել պրոստատի իրայատուկ Անտիգենի (D.S.A.) ստուգման օգտաւէտութեան շուրջ (սա արեան մի տեստ է, որ կատարուում է հիւանդութիւնը նախնական շրջանում ախտորոշելու նպատակով, Լ.Ա.):

Կան բժիշկներ, որոնք համոզուած են, թէ այդ տեսող կարող է կեանքեր փրկել: Ուրիշներ, հաւատացած են, որ տեսողը պարզապէս պատճառ է դառնում անտեղի վիրահատումների եւ «Ռեմուտեճ» ճառագայթներով բուժումների: Այս տարակարծութեան պատճառն այն է, որ բազմաթիւ դէպքերում պրոստատի քաղցկեղի զարգացման ընթացքը այնչափ դանդաղ է, որ տառապողների 10-ից 9-ը մահանում են մի որեւէ ուրիշ հիւանդութիւնից: Երկու կողմերն էլ հաւանաբար իրաւացի են, քանի որ շատ տարիներ են պէտք մինչեւ ներկայ տարուղ ուսումնասիրութիւնները կարողանան հանգել մի ճշգրիտ պատասխանի:

«Քաղցկեղի Ազգային Ինստիտուտի» կողմից վերջերս հրատարակուած մի զեկոյց ցոյց է տալիս, որ պրոստատի քաղցկեղի մահացութիւնը սկսել է նազել 1991թ. շնորհիւ, D.S.A. տեստի լայն տարածումից մէկ տարի անց:

Առայժմ, ես խորհուրդ եմ տալիս, որ նախքան այդ ստուգողական տեստին դիմելը, մարդիկ այդ մասին խորհրդակցեն իրենց բժշկի հետ:

Անկախ նրանից, թէ ի՞նչ է ձեր որոշումը տեստի մասին, դուք կարող էք դիմել հետեւեալ մի քանի քայլերի, որոնցով նպաստած կը լինէք ձեր պրոստատը առողջ պահելուն:

1. Սպառէք մեծ քանակութեամբ միրգ եւ բանջարե-դէն:

Այն անհատները, որոնք օրական երեք պահ բանջարեղէն են ուտում, ըստ վերջին հետազոտութիւնների, գրեթէ կէսի են իջեցնում պրոստատի քաղցկեղի վտանգը: Խաչածաղկատր բանջարեղէնները, ինչպէս օրինակ՝ բրոկոլին, ծաղկակաղամբը, շաղգամը եւ կաղամբի տեսականին, մեծապէս օգտակար են: Նոյնպէս օգտակար է

նաեւ լոլիկը, որն հարուստ է բնական հակաօքսիդացնող լայկապէնով:

2. Քչացրէք կենդանական ճարպերի օգտագործումը:

Յագեցուած ճարպով հարուստ կերակրատեսակները, որ գլխատրապէս բաղկացած են լինում մսից եւ կաթնամթերքներից, պրոստատի քաղցկեղի սրացման պատճառ են դառնում: Մասնատրապէս վատ է կարմիր միսը:

3. Առաւել օգտւէք սոյայով եփած ուտելիքներ:

Սոյայով հարուստ ուտելիքները, բացի այն որ պրոստատի քաղցկեղի առաջացման հնարատրութիւնը իջեցնում են, օգնում են նաեւ կանխելու պրոստատի գեղձի խոշորանալուն, որն ինքնին առաջ է բերում մի շարք անհանգստացուցիչ ախտանշաններ, ինչպիսիք են՝ յաճախամիզութեան ցանկութիւն, մէզի հոսքի դանդաղում, նոյնիսկ կաթիլ- կաթիլ հոսք, որը յաճախ զուգակցուած է լինում ցաւի հետ: Սոյաբուրգերը (soyaburger) սոյայի կաթը, սոյայի հատիկները կամ դրանցից պատրաստուած տոֆու կամ տեմպէ ամուրով համեղ խորտիկները՝ բոլորն էլ սոյայի լաւ աղբիւր են հանդիսանում:

4. Խուսափէք երիտասարդութեան ամուրով ծանօթ հորմոնային լրացուցիչ գործածութիւնից:

Չնայած նման միջոցների բարձրացրած աղմուկին, դեռեւս չկան փաստեր, որ հաստատեն թէ դրանց սպառումը կասեցնում է պրոստատի քաղցկեղի յառաջընթացը: Մինչդեռ, տեսականօրէն, հնարատր է, որ այդ լրացուցիչ հորմոնները խթանում են տեստոստերոնի արտադրմանը եւ հաւանաբար նաստանում են շագանակագեղձի (պրոստատի) ծաւալային աճին:

5. Նկատի առէք ցելէնիւմի եւ վիտամին E ամբողջացնող սննդամիջոցների սպառումը:

Վերջին ուսումնասիրութիւնները թելադրում են, թէ վերոնշեալ միջոցները մարմինը պաշտպանում են պրոստատի քաղցկեղի դէմ:

Առօրեայ ուտելիքներով, սակայն, հնարատր չէ ստանալ դրանց բաւարար չափ, մանաւանդ վիտամին E-ի պարագայում: Մի ուսումնասիրութեան արդիւնքում օգտակար է դասել օրական 250 միկրոգրամ ցելէնիւմի սպառում: Բայց մի սպառէք դրանից աւելին: Բարձր դոզան կարող է բուժատր լինել եւ մագաթափման եւ եղունգաթափման պատճառ դառնալ: Մէկ այլ ուսումնասիրութիւն յայտնաբերել է, որ օրական 50 I.U. (միջազգային միատր) վիտամին E ամբողջացնող դոզան քչացրել է օրական 450 I.U.-ի սպառումը, որովհետեւ այդ չափը կարող է քչացնել նաեւ սրտի հիւանդութիւնը եւ այլ կարգի քաղցկեղների հաւանութիւնը: Ինչպէս միշտ, այս դէպքում էլ լաւ է խորհրդակցէք ձեր բժշկի հետ նախքան յանելալ (supplement) միջոցների սպառման դիմելը:

Միշտ յիշէք, որ ամբողջացնող միջոցը, եթէ էլ ունենում են նպաստատր դեր, ապա այդ հաւանաբար լինում է չնչին:

Բայց մեզինչ շատերը հեշտ լուծումներ են փնտրում, օրինակի համար գերադասում են դեղահատեր օգտուել, դրանով հանդերձ որ քաջ գիտեն, թէ աւելի ազդեցիկ է փոխել մեր սնելու եղանակը: ■

Թարգմանեց  
Լեւոն Ահարունեանը



ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

«ԱՐԱՐԱՏ» (ԵՐԵՎԱՆ) - Հայաստանի ուժեղագույն թիմը խորհրդային Ֆուտբոլի վերջին երեք տասնամյակում: «Արարատ» է անունակոչվել 1963թ (մինչ այդ՝ «Մպարտակ»): 1963, 1965-91թթ հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում: 1965թ յաղթող է դարձել ԽՍՀՄ առաջնության առաջին խմբում (վճռական խաղում 2:1 հաշվով Ալմա Աթայի «Կայրաթի» նկատմամբ) և վերադարձել բարձրագույն խումբ: Փոքր ոսկե մեդալներով պարգևատրվել է Վ. Ալբրուժեյը, Վ. Վորկովը, Ի. Մերոբեանը, Կ. Անտիսեանը, Ն. Մետրոպեանը, Լ. Յովսեփեանը, Ս. Բարայեանը, Ա. Կովալենկոն, Ռ. Եղիազարեանը, Ա. Գրիգորեանը, Ս. Գալստեանը, Վ. Անտոնեանը, Ս. Հովհիսեանը, Դ. Պայիսը: Թիմի գլխավոր մարզիչ՝ Ա. Ֆալեան:



1971-ին «Արարատը» դարձել է ԽՍՀՄ փոխչեմպիոն և մասնակցել ՈՒԵՖԱ-ի գալաքի խաղարկմանը: Արծաթե մեդալներով պարգևատրվել են Ա. Աբրահամեանը, Ռ. Ասանեսեանը, Ա. Կովալենկոն, Ֆ. Աբրահամեանը, Ն. Մետրոպեանը, Լ. Յովսեփեանը, Ա. Անդրեասեանը, Ս. Բանդարենկոն, Յ. Չանազանեանը, Լ. Իշտոյեանը, Է. Մարգարովը, Ն. Նազարեանը, Է. Յարուսիմեանը: Թիմի գլխավոր մարզիչ՝ Ն. Գլեբով, թիմապետ՝ Է. Գրիգորեան, մարզիչներ՝ Յ. Քեհեյեան, Ա. Միրակյանեան:

1973-ին «Արարատը» նոր թռիչք կատարեց նույնպես խորհրդային Ֆուտբոլի երկու բարձունք՝ գալաք և չեմպիոնի տիտղոս: Ոսկե մեդալների արժանացան Ա. Աբրահամեանը, Ս. Գեորգեանը, Ա. Մարգսեանը, Ա. Կովալենկոն, Ն. Մետրոպեանը, Խ. Մարտիրոսեանը, Ա. Յարուսիմեանը, Ա. Անդրեասեանը, Ս. Բանդարենկոն, Յ. Չանազանեանը, Ս. Պողոսեանը, Ն. Պետրոսեանը, Է. Մարգարովը, Լ. Իշտոյեանը, Ն. Ղազարեանը: Թիմի գլխավոր մարզիչ՝ Ն. Միմոնեան, թիմապետ՝ Ռ. Շաղիկեան, մարզիչներ՝ Յ. Քեհեյեան, Յ. Աբրահամեան: Գալաքի խաղարկման եզրափակիչում արարատցիները բացառիկ լարած պայքարում (լրացուցիչ ժամանակում) 2:1 հաշվով յաղթեցին Կիեվի «Դինամոյին»: Արժանաշիշատակ է, որ մինչև 89-րդ րոպեին նրանք պարտության եզրին էին: Հանդիպման հերոս դարձաւ Լեւոն Իշտոյեանը՝ խփելով երկու գոլ: «Արարատն» իրաւունք ստացաւ հանդես գալու Եւրոպայի չեմպիոնների գալաքի խաղարկութիւնում, մի շարք յաղթանակներ տարաւ, հասաւ մինչև քառորդ եզրափակիչ, ուր եւ զիջեց ապագայ գալաքակրին մեծահամբաւ «Բայերնին»:

ԽՍՀՄ գալաքի վրայ «Արարատ» անունը երկրորդ անգամ փորագրուեց 1975-ին: Գալաքակիներ դարձան Ա. Աբրահամեանը, Ս. Գեորգեանը, Ա. Մարգսեանը, Ա. Միրոպեանը, Ն. Մետրոպեանը, Ս. Մարտիրոսեանը, Ա. Անդրեասեանը, Ս. Բանդարենկոն, Լ. Իշտոյեանը, Է. Մարգարովը, Ն. Պետրոսեանը, Ս. Պետրոսեանը: Թիմի գլխավոր մարզիչ՝ Վ. Մասլով, թիմապետ՝ Կ. Փախիւանեան,

մարզիչներ՝ Յ. Աբրահամեան, Էդ. Յարուսիմեան: Եւրոպայի գալաքակիրների գալաքի խաղարկութիւնում «Արարատի» առաջխաղացումն այս անգամ էլ կանգնեցրեց ապագայ գալաքակիրը՝ «Լեստ Հէմ Իւնայթէդը»:

1976թ անցկացուեց ԽՍՀՄ երկու առաջնութիւն՝ գարնանային և աշնանային: Առաջինում արարատցիները շահեցին արծաթե մեդալներ. Ա. Աբրահամեան, Ս. Գեորգեան, Ա. Մարգսեան, Ա. Միրոպեան, Ս. Մարտիրոսեան, Ն. Մետրոպեան, Ա. Փարսադանեան, Ա. Քերոբեան, Ա. Անդրեասեան, Հ. Միմասեան, Ս. Պետրոսեան, Խ. Յովհաննիսեան, Ն. Պետրոսեան, Ն. Ղազարեան: Թիմի գլխավոր մարզիչ՝ Է. Մարգարով: «Արարատը» նաեւ հասաւ ԽՍՀՄ գալաքի խաղարկման եզրափակիչ, սակայն 0:3 հաշվով պարտեց Թբիլիսի «Դինամոյին»:

Ժամանակին կատարած ոչ ճիշտ սերնդափոխութիւնը, Ֆուտբոլային ստորին օղակներում սակաւ արդիւնաւետ աշխատանքը յետագայ յաջողութիւններով չապահովեցին «Արարատին»: Վերջին տարիներին թիմի առաջատար խաղացողները պայմանագրային կարգով հանդես են գալիս արտասահմանեան ակումբներում (Աշ. Խաչատրեան, Յ. Մխիթարեան, Բ. Մելիքեան, Ե. Սուքիասեան, Ս. Յովհաննիսեան, Ռ. Գրիգորեան և ուրիշներ): Ներգրաւելով ՀՀ ազգային մրցումներում, «Արարատը» դարձել է չեմպիոն և կրկնակի գալաքակիր, մասնակցում է նաեւ եւրոգալաքների խաղարկութիւններին:

«Արարատի» բազմաթիւ Ֆուտբոլիստներ տարբեր տարիների հանդես են եկել ԽՍՀՄ բոլոր հաւաքականներում:

Հայկական Ֆուտբոլը, գլխավորապէս յանձին «Արարատի» և նրա նախորդների, առանձնանում է տեխնիկական բարձր պատրաստականութեամբ, յարձակողական խաղաոճով, հանպատրաստի ստեղծագործելու կարողութեամբ կատարողական խանդավառութեամբ:

ԲԱՐԱՅԵԱՆ ՍԵՂՎԱԼԴ (ծնւ. 1937թ.)

Կիսապաշտպան: Մպորտի վարպետ: Տեխնիկապէս լաւ պատրաստած, տակտիկապէս հմտօրէն գործող Ֆուտբոլիստ: 1960-63 թթ. Երեւանի «Մպարտակ» և «Արարատ» թիմերի կազմերում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում: Անցկացրել է 190 խաղ, խփել 2 գոլ: 1965 թ. ԽՍՀՄ առաջնության առաջին խմբի յաղթող և փոքր մեդալակիր:

«ԲԱՅԵՐՆ» (Մյունխեն)

Ակումբը հիմնել է 1900 թ.: Մարգադաշտը՝ քաղաքային (44.000), հիւրընկալում է նաեւ տեղի Օլիմպիական մարգադաշտում: Եւրոպայի չեմպիոնների (1974-76), գալաքակիրների (1967) և միջ-մայրցամաքայինի (1976) գալաքակիր, ԳՖՀ-ի բազմակի չեմպիոն ու գալաքակիր: Լաւագոյն խաղացողները՝ Բեկենբաուեր, Գ. Միլլեր, Մայեր, Բրայթներ, Հեօմէս, Ռումենիգէ, Պապեն, Ժորժինեօ, Բերթոլդ և ուրիշներ:



# Ժամանց



## Հոկտեմբեր

Հոկտեմբեր ամսանունը գալիս է լատիներեն octo «ութ» բառակահից: Հռոմեացիներն այդ ամսանունը ասում էին october mensis «ութերորդ՝ հոկտեմբեր ամիս», կարճ՝ october:

Երոսպական շատ լեզուներում այդ ամսանունը հընչումով գրեթե չի հեռացել լատինականից. անգլերեն October, Ֆրանսերեն Octobre, գերմաներեն Oktober: Հայերենում՝ բառական մեծ է, *օկտոբեր- հոկտեմբեր*: Պարզ նկատելի է, որ *հոկտեմբեր* ձեռն առաջացել է «հարեւան» ամսանունների ազդեցութեան տակ, նրանց նմանողութեամբ. *սեպտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր*: Սկզբի Հ-ն էին յունարեւի անուղղակի ազդեցութեան արդիւնք են համարում:



## Համայնքային կատակներ

12-րդ ՊԺ-ի թեկնածուն հարցնում է նախկին պատգամատրին:

- Չեր կարծիքով ի՞նչ յատկութիւններ պիտի ունենայ պատգամատրը:
- Բարեխղճութիւն, ազնութիւն, ազգասիրութիւն եւ մի հատ էլ ձեռքի թաշկինակ:
- Թաշկինակն ինչի՞ համար:
- Որ ժողովներում յօրանջելուց բերանը ծածկի:



- Ի՞նչ է նշանակում 12-րդ ՊԺ:
- Պատի ժամացոյց:
- Ի՞նչ կսպ ունի պատի ժամացոյցը Պատգամատրական Ժողովի հետ:
- Երկուսի համար էլ բաթրի է պէտք, մէկին՝ մէկ, միւսին՝ 16 տարւայ համար:



- Կինը՝ ամուսնուն.
- Ժարմիկ ջան, ես որոշել եմ ՊԺ-ի թեկնածու դառնալ:
  - Ինչու՞:
  - «Չայն» են տալիս եւ վաղը, միւս օրն էլ կարողաւ ուրիշ շատ բաներ էլ հետը տան:



- Թեկնածուին հարցնում են.
- Չեր ծրագրում դուք ու՞ն էք միասնականութեան կոչ անում:
  - Մեզ:
  - Միթե՞ դուք միասնական չէք:
  - Ինչու չէ, բայց ասում ենք, որ միւսներն իմանան:



- 16 տարի ՊԺ-ի անդամ լինելուց յետոյ ի՞նչու էք նորից ձեզ առաջադրել 12-րդ ՊԺ-ի թեկնածու:
- Սովորութեան համաձայն:
- Չեր կինը գիտի՞ այդ մասին:
- Սովորութեան համաձայն:
- Դրա՞ համար արտագաղթեց ուրիշ երկիր:
- Սովորութեան համաձայն:
- Բա ՊԺ-ն ոչինչ չի՞ կիրառելու այդ արտագաղթի դէմ:
- Սովորութեան համաձայն:



- Թեկնածուներից մէկին հարցնում են.
- Դուք գիտե՞ք, որ 1988 թ.-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի համար իրանահայութիւնը 70 միլիոն թուման օգնութիւն է հաւաքել, սակայն նախկին Թեմական Խորհուրդը այդ գումարով մի չգործող ծոբակների գործարան է կառուցել:
  - Գիտեմ:
  - Որ ընտրուեք, ի՞նչ էք անելու, որ այդ գումարները նպատակին ծառայեն:
  - Երկրաշարժ:



## 12-րդ-ՊԺ ի ընտրութիւնները Թումանեանի հեքիաթներով

- ⇒ Նարնաքցի Համբոյի տունը կռիւ էր ընկել Համբոս ուզում էր իր 26 տարեկան տղային տանի թեկնածու անի, որ մարդ դառնայ, նստել-վեր կենալ սովորի, մարդամէջ դուրս գայ: Կինը չէր համաձայնում.
- Չէ, չեմ ուզում. երեկ գիշեր երազ եմ տեսել, որ բազազ Արտեմը Ազգային Ժողովում ինչե՛ր էր խորովում... չեմ ուզում...
  - Կինը չէր համաձայնում.
  - Չէ, չեմ ուզում, իմ էրեխին մի գցիր էդ ժողովը, որ իր տակտիկ լողովը, ծովից ծով հողովը, մեր բախտի կողովը ծածկում է քողովը. չեմ ուզում...



## Ասացածքներ (հայկական)

- ✓ Ժողովուրդը քնած առիւծ է, որ արթնացաւ էլ չի քնի:
- ✓ Ժողովրդի ձայնը թնդանթի ձայնից ուժեղ է:



## ԱՖորիզմ

- ⇒ Ամեն մի խիզախ. ամեն մի ճշմարտասէր մարդ պատիւ է բերում իր հայրենիքին:

Ռ. Լոյան

- ⇒ Եթէ հակառակ կարծիքներ չեն արտայայտուել, ապա էլ ինչի՞ց ընտրել լաւագոյնը:

Շերողոս

# Ժամանց

## ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 8

Կազմեց՝  
Կ.Տ.Յովհաննիսեանը

### Շորիզոնական

1. Դժար է ձեռք բերում, նոյնիսկ ար-եան գնով, բայց երբ կայ՝ արժեքը չենք իմանում - անուշ բոյրով ծաղիկ:
2. Ոչ շատ, ոչ քիչ - տանջել, չարչարել:
3. Գերադասելի ի քանակից- կարճ հա-սակ ունեցող - սնամէջ նոր...:
4. Ոչ կրօնական վարչաձեռն (օտար) - տնային վնասակար միջատ:
5. Առաջ չէ- իրար դէմ կռուել:
6. Վճիռ, զուլալ - ժողովրդական կոչա-կան բառարեստի ձեռ:
7. Անձնական դերանուն - վերակենդա-նացում - ցանցառ:
8. Աջից՝ ոչ մեծ - խնում են տօնական համախմբումների ժամանակ - աջից՝ տարածութեան միատր:
9. Մասաների բնակարան - յատուկ է աղջիկներին - անդուտ գոմ...:
10. Ժամանակահատուած - խոհանոցային պիտոյք - օժանդակ հոգնակի բայ - քաջ:
11. Իսլամական աղանդ - ամբողջացում-- գիղատնտեսական աշխատանք:
12. Ժխտական ածանց - քաղաք հին Պաղեստինում, Երուսաղէմից 45 կմ դէպի հիւսիս - թաղման կարգ, արարողութիւն:
13. Պատժամիջոց - խոհուն:
14. Ճանապարհ - ժողովրդական՝ ես - վայրի (գազանների համար)
15. Կտոր - կտոր անել - հետք - քակոց:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1									■						■
2								■							
3				■						■				■	
4	■			■						■				■	
5			■											■	
6								■		■			■		
7			■							■					
8	■					■					■		■		
9				■				■					■		
10								■					■		
11										■				■	
12			■								■		■		
13		■						■							
14				■				■							■
15									■			■			

ԼՈՒԾԵՔ  
ԽԱՉԲԱՌ  
  
ՍՏԱՅԵՔ  
ՆԻՐ

### Ուղղահայեաց

1. Պողոտայ Երեւանում - շրջապատել:
2. Գործածած է նարդի խաղի մէջ - որոշ չափով խելապակաս - թոշնաձայն:
3. Գիւղից մեծ բնակավայր - միջուկը կերած նուռ - պրոտէինով հարուստ կերակուր:
4. Ճակնդեղ - մեր ժողովրդի շահերին զօրավիզ հանդիսացող:
5. Հարցական բառ - շան կերի աման - ցեղ Երոսայում եւ Ասիայում:
6. Արքայ հանդիսացող - Իրանի զաւառներից, ուր եղել է հայկական մեծ գաղութ:
7. Ուրոյն, յատկանշական - մարդկային առաջին գիտը:
8. Հողի կտոր՝ վրայի դալար բոյսերով - Եպիսկոպոսական շրջան- կիսով խմած ջուր...- սա էլ կիսած գլուխ:
9. Շատ վեր վեր թռչող - ...Բրոնտէ, անգլիացի կին՝ գրող (1818-1848):
10. Կովի մի մասը - մօր անուանումներից- Իրանահայ բանաստեղծուհի:
11. Հեղուկի տաքութեան զազաթնակէտը- մարմնի սինն է - գիղատնտեսական աշխատանք- նորագոյն երաժը-տութեան ձեռ:
12. Գրիգոր...՝ հայ ժամանակակից նկարիչ - կիսաթանկագին քար:
13. Դժնդակ ամիս՝ հայութեան համար - ժամանակահատուած - կին սպասատր:
14. Կերած կեր...- մարմնի կարծր մասերը - քաղաք՝ հանգստավայր Սեւ Ծովի ափին:
15. Լցած- յետին մտքեր ունեցող, նենգամիտ:

Խաչբառ համար 7-ի  
լուծած տարբերակը  
տեսնել՝ էջ 24-ում:

# Երիտասարդական

## ԲԱՆԻՏԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԲԵՐԵՑ

Պրոֆ. Ռ. Ա. Ղազարեան

Էլի նոյն պատմութիւնը... Ուզում ես մի լաւ բան անես, բոլորին ուրախացնես... գիտութիւնը զարգացնես... ու, յանկարծ, անապատելի ու տխուր վախճան: Ճիշտ է ասում Աշոտը, ճախորդ եմ, է՛լի: Բայց չէ, պէտք չէ այդպէս մը տածել... Հայրիկս ասում է, մարդ իրեն ինչ որ ներշնչի, այնպիսին էլ կը դառնայ... Ուրեմն չի կարելի յուսահատուել... կը մտածեմ, որ յաջողակ եմ... որ ամէն ինչ լաւ կը ստացուի... բայց արի ու մի յուսահատի... Վերցնենք հէնց այսօրայ դէպքը:



Գպրոցից համարեա վազէվազ հասայ տուն, որ անմիջապէս կատարեմ այն հետաքրքիր փորձը, որի մասին դպրոցում պատմել էր Ֆիզիկայի ուսուցիչը:

Արդէն մօտեցել էի մեր տանը, երբ դիմացս կանգ առաւ պաղպաղակի սայլակը և տեց մեր թաղի երեխաներին այնքան ծանօթ ու բաղձալի ազդանշանը:

-Մարտժին եկաւ, մարտժին եկա՛ւ,- դուրս թափւեցին երեխաները, շրջապատելով սայլակը: «Կը վերցնեմ երեք հատ՝ ինձ ու փոքրիկներին», որոշեցի ես՝ շոշափելով գրպանիս մանրը և հէնց այդ պահին բակից դուրս վազեց յուզած Գայուշիկը՝ երեքամեայ քոյրիկիս: Նա սրընթաց նետեց դէպի սայլակը:

-Մառոժին քեռի, ինձ երկու պաղպաղակ տուր,- շնչակառուր գոչեց նա, պարզելով դրամը: Մեծերը ծիծաղեցին, իսկ վարորդը շոյեց նրա գլուխը:

Այսպիսի դէպքերում հայրիկս ասում է՝ «այնքան են ընտելացել շիլփալա լեզուի, որ զարմանում են, երբ մէկը նորմալ է խօսում»: Մեր ընտանիքում այդ հարցը խիստ է դուրս՝ նախադասութիւնը սկզբից մինչև վերջ պիտի կամ հայերէն, կամ ռուսերէն լինի, իսկ մինչև հինգ տարեկան՝ միայն հայերէն: Ի միջի այլոց, երբ ընտելանում ես, բոլորովին դժուար չէ:

Մինչ Վազգէնիկը և Գայուշիկը լպստում էին պաղպաղակը, ես անցայ գործի:

Վերցրի մի լրագիր և դէմ արի վառարանի պատի: Ընկեր Գէորգեանն ասում էր, որ պատը անպայման պիտի տաք լինի, որպէսզի թուրքը լաւ չորանայ:

Ապա հագուստի խոզանակով սկսեցի շփել: Լրագիրն անմիջապէս էլեկտրական լիցք ստացաւ և կպաւ պատին:

-Տատի, ուզում ես վախեցնեմ քեզ:

-Մի սրա՛ն տես,- անմիջապէս բորբորեց տատիկը,- մէկէլ օրն է ճից դուրս եկել ու ինձ ձեռ է առնում:

- Չես հաւատում, արի հայելու մօտ, կը համոզուես...

Եւ երբ տատիկը մօտեցաւ հայելուն, ես զգուշութեամբ պոկեցի լրագիրը, բարձրացայ աթոռին, պահե-

ցի տատիկի գլխավերելը: Տատիկի մազերը անմիջապէս քիզ-քիզ կանգնեցին: Ծիծաղելի էր:

- Տեսնո՞ւմ ես, վախից ոնց ես փշաքաղուել,- ասացի ես:

- Էս ի՞նչ օյին բերի գլխիս,- զարմացաւ տատիկը:

Իսկ Վազգէնիկը և Գայուշիկը նոյնիսկ վախեցան, բայց համոզելով, որ տատիկին վտանգ չի սպառնում, իրենք էլ սկսեցին ծիծաղել:

Յետոյ բերեցի մեր պղնձեայ մատուցարանը և դրեցի չորս բաժակի վրայ, որպէսզի էլեկտրական լիցքը նրա վրայից չարտահոսի: Մի քանի անգամ լրագիրը քսեցի մատուցարանին և լիցքատրեցի: Մնում էր ստուգել փորձի երկրորդ մասը: Ընկեր Գէորգեանը զգուշացրեց, որ եթէ մատը մօտեցնես մատուցարանին, ապա կայծ կառաջանայ և ասեղի պէս կը ծակի: Այդ ձեռով կարելի է դաստիարակել գող փիսիկին կամ տընային քոթոթին: Մենք քոթոթ չունենք, ուստի որոշեցինք դաստիարակել փիսիկին: Կէս ժամ մահճակալների տակ փնտրեցինք: Վերջապէս գտանք ու մօտեցրինք մատուցարանին, որի վրայ նախօրօք մի պատառ միս էինք դրել: Բայց փիսիկը վախվխելով մայեց տատիկին, ապա անտարբեր տեսքով նստեց մատուցարանի կողքին:

Ես սկսեցի փաղաքշել նրան, մօտեցրի մատուցարանին ու ետ քաշեցի: Նա հոտհոտեց և առաջ բերեց քիթը... մէկ էլ այնպիսի թռչիք գործեց ու փռշտաց, որ մատուցարանը ընկաւ աթոռից, չորս բաժակն էլ ջարդ ու փշուր եղան:

Ահա և բոլորը:

Հայրիկն ասաց, որ ճիշտ է, մեծ գիտնականները իրենց փորձերի համար կենդանիներ են օգտագործել, բայց ես դեռ գիտնական չեմ և այդ իրատուքը չեմ վաստակել:

Իսկ տատիկն ատելացրեց, որ եթէ ամէն մի դատարկ փորձի համար չորս բաժակ զոհեմ, ապա շատ շուտով ամբողջ տունը կը քանդեն:

Չէ՛, բախտս նորից չըրեց... ■

### Համար 7 խաչբառի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	0	հ	ա	ն	դ	ու	ր	ե	ա	ն	լ	ա	ս	տ	
2	դ	ո	ր	պ	ա	տ	լ	ր	ա	բ	ե	ր	ա		
3	ա	ն	տ	ա	ր	ա	կ	ոյ	ս	ա	ջ	ու	ր		
4	ա	ո	ս	ա	կ	ա	թ	ե	ի	զ	մ	ա	ա		
5	ժ	լ	ա	տ	ե	տ	ն	կ	ո	կ	ա				
6	ա	ու	լ	օ	ղ	ա	կ	կ	ա	ն	ա	չ	ի		
7	մ	լ	ա	կ	ե	ղ	ա	ն	ա	կ	ա	ւ	ո	ր	
8	կ	ու	ր	ո	ր	տ	զ	ո	ն	ա	ա	ր			
9	ո	ա	մ	ր	ո	ա	մ	ր	ա	պ	ա	հ	ե		
10	չ	ն	ի	պ	ա	ն	ա	ւ	փ	ո	ք	ր			
11	ա	ո	ս	կ	ե	ի	ա	զ	ա	լ	ո	ե	կ		
12	ա	ր	տ	օ	զ	ա	մ	ա	ի	ց	ո	ղ	ա		
13	ն	ա	ջ	ք	ա	մ	ու	տ	ք	ա	կ	ն			
14	ա	յ	ր	ի	ա	ն	ա	լ	ա	ռ	ն	ա	ց	ի	
15	կ	ր	ա	կ	մ	ա	ր	ք	ւ	է	թ	ի	ւ		